Մ.Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ժ.Մ. ԱՌՍՏԱՄՅԱՆ

**ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՈՍԿԻԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՑԻՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԷԼԵԿՏՐՈՂԱՑԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

Ցույց է տրված Հայաստանի Հանրապետության Շահումյանի հանքավայրի ոսկի-բազմամետաղային հանքաքարից ստացված խտանյութից բազային (Cu, Zn, Pb, Fe), ազնիվ (Au, Ag) և ուղեկցող (Se, Te, Bi, Cd) մետաղների կորզման սկզբունքային հնարավորությունը: Բազմամետաղային խտանյութից արտադրական վերջնանյութի ստացման տեխնոլոգիան ներառում է մի շարք գործողություններ, այդ թվում՝ խտանյութի ցածրջերմաստիճանային սուլֆատացման թրծումը, թրծված թերայրուկի լուծումը թույլ թթվային լուծույթում, մետաղների ընտրողական կորզումը հեղուկ և պինդ ֆազերից և նրանց գտումը ցեմենտացման ու էլեկտրավերականգնման մեթոդներով: Ստացված կապարը կարող է կիրառվել որպես բազային մետաղ հանրապետությունում էլեկտրոդային նյութերի արտադրության կազմակերպման համար՝ նպաստելով գոյություն ունեցող կուտակիչների, ինչպես նաև կապարի ու նրա համաձուլվածքների հիմքով անլուծելի անոդային նյութերի արտադրության զարգացմանը:

Առանցքային բառեր. կորզում, սուլֆատացնող թրծում, ոսկիբազմամետաղային հանքաքար, բազմամետաղային խտանյութ, էլեկտրոդային նյութ, կապար:

M.V. MARTIROSYAN, Z.M. ARSTAMYAN

**THE PERSPECTIVE OF USING THE GOLD POLYMETALLIC ORE OF
THE SHAHUMYAN DEPOSIT FOR OBTAINING ELECTRODE
MATERIALS**

The fundamental possibility of using the hydrometallurgical method for extracting basic (Cu, Zn, Pb, Fe), noble (Au, Ag) and accompanying (Se, Te, Bi, Cd) metals from the gold polymetallic ore concentrate of the Shahumyan deposit of Republic of Armenia is shown. The technology of hydrometallurgical repartition of industrial products from polymetallic concentrate includes a number of operations, including the low temperature sulphatization roasting of the concentrate, the dissolution of the calcined cinder in a slightly acidic solution, the selective extraction of metals from liquid and solid phases and their cleaning by the methods of cementation and electroreduction. The possibility of extraction of lead by cementation with scrap iron solid residue obtained after the separation of the pulp is proposed and experimentally substantiated. The resulting lead can serve as a base metal for the production of electrode materials in the country and contributes not only to the development of the existing battery industry, but also the creation of insoluble anode materials based on lead and its alloys.

Keywords: extraction, sulphatization roasting, goldpolymetallic ore, polymetallic concentrate, electrode material, lead.

Ո.Ջ. ՄԱՐՈՒԹՅԱՆ, Ս.Հ. ԷԼԲԱԿՅԱՆ

ՋԵՐՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ ԱԾԽԱԾՆԻ ԵՐԿՕՔՍԻԴԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հաշվի առնելով գլոբալ տաքացման գործընթացում ածխածնի երկօքսիդի՝ որպես ջերմոցային գազի ներգործությունը՝ վերլուծվել են էկոլոգիապես անվտանգ ջերմային էլեկտրակայաններում դրա կապակցման տեխնոլոգիական լուծումները և իրականացման հնարավորությունները: Գնահատվել է ծխագազերի մաքրման արդյունավետ համակարգերով կահավորված և նախքան այրումը ածխի գազիֆիկացմամբ էլեկտրակայաններում CO₂-ի կրճատման և քվոտների վաճառքի ազդեցությունը կայանի տնտեսական արդյունավետության ցուցանիշների վրա:

Առանցքային բառեր. էկոլոգիապես անվտանգ ջերմային էլեկտրակայան, ծխագազերի մաքրման համակարգեր, ածխի գազիֆիկացում, ջերմոցային գազ, ածխածնի երկօքսիդ, քվոտների վաճառք:

Այն երկներում, որտեղ էներգետիկ ոլորտի զարգացման հեռանկարները ենթադրում են օրգանական վառելիքի նկատմամբ որոշակի հովանավորչական քաղաքականության իրականացում, նոր նախագծվող ջերմային էլեկտրակայաններում (ՋԷԿ) հիմնականում նախատեսում են ածխափոշային վառելիքի կիրառումը:

Վերոնշյալը առավելապես վերաբերում է Գերմանիային, Չինաստանին և Հնդկաստանին, որտեղ ածխի արդյունահանման զարգացման համար առկա են անհրաժեշտ նախադրյալներ և տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելու հնարավորություն: Էներգետիկական նպատակներով ածխի լայնածավալ կիրառման հիմնական կաշկանդիչները կլիմայի համընդհանուր տաքացման դեմ ուղղված միջոցառումների շրջանակներում ընթացող գործառնություններն են: Ածխի՝ որպես վառելիքի առանձնահատկությունն այն է, որ ածխափոշային ՋԷԿ-ում արտադրված էլեկտրական էներգիայի յուրաքանչյուր միավորին, ի համեմատություն գազային վառելիքով աշխատող էլեկտրական կայանների, բաժին են ընկնում ջերմոցային գազերի զգալիորեն ավելի մեծ արտանետումներ: Էկոլոգիական չափորոշիչների անընդհատ խստացումը, ինչպես նաև արտանետումների և շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման համար գանձվող վճարների աճը և սահմանային թույլատրելի արտանետումների գերազանցման պարագայում ձեռնարկության սեփական շահույթից վճարվող տուգանքների պատիկայնության սկզբունքը

ստիպում են մշակել և կիրառել արտանետումների մաքրման արդյունավետ մեթոդներ՝ բարելավելով էներգատեղակայանքների էկոլոգիական բնութագրերը: Ոլորտում ստեղծված իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար հարկ է դիմել էլեկտրաէներգիայի արտադրման տարբեր տեխնոլոգիաների համեմատական օրինակին, որից և պարզորոշ կլինի, որ ածխի օգտագործման նորագույն տեխնոլոգիաները հնարավորություն կընձեռեն, ի տարբերություն ավանդական ածխափոշային ՋԷԿ-երի, շահագործել տնտեսական և բնապահպանական առավել բարձր ցուցանիշներով էլեկտրակայաններ [1]:

Կարծր վառելիքով աշխատող շոգետուրբինային էներգաբլոկներում էկոլոգիապես անվտանգ ՋԷԿ-երին ներկայացվող չափորոշիչներն ապահովվում են 2 ձևով.

- ծխագազերի մաքրման արդյունավետ համակարգերի ներդրմամբ,
- շրջանառվող եռացող շերտով կաթսաների կիրառմամբ:

Մասնավորապես, Ալտբախ-Դեյցիգաու գերմանական ՋԷԿ-ի №5 էներգաբլոկը կարծր վառելիքով աշխատող էկոլոգիապես անվտանգ էներգահամալիր է, որտեղ բարձր արդյունավետությամբ իրականացվում է ծխագազերի մաքրում բոլոր վնասակար միացություններից՝ մոխրի մասնիկներից, ծծմբի և ազոտի օքսիդներից: Մթնոլորտ արտանետվող ջրային գոլորշիների նվազեցման նպատակով շահագործվում է համակցված կիսաչոր ստիպողական քարշով աշտարակահովացուցիչ: Գլոբալ տաքացման գործընթացում քանակական տեսանկյունից ամենամեծ ներդրում ունեցող ածխաթթու գազի արտանետումների կրճատման տեխնոլոգիական սարքավորումներով կայանը կահավորված չէ, սակայն էլեկտրական և ջերմային էներգիաների համատեղ արտադրության իրականացումը որոշ չափով մեղմում է այդ իրողությունը:

Առաջնորդվելով էկոլոգիական չափորոշիչների պահպանման նկատառումներով՝ շվեյցարական Vattenfall ընկերությունը կառուցեց 30 ՄՎտ հզորությամբ «մաքուր» ածխափոշային Schwarze Pumpe էլեկտրակայանը, որտեղ թթվածնային միջավայրում այրման կազմակերպումը բացառում էր ազոտի օքսիդների արտանետումները, իսկ մոխրի մասնիկներից և ծծմբի օքսիդներից ծխագազերի մաքրումից հետո իրականացվում էր ածխաթթու գազի հեղուկացում և պահում:

Vattenfall ընկերությունը հետագոտում է նաև 2 այլ տեխնոլոգիաներ՝

- ✓ ավանդական այրման գործընթացից հետո ծխագազերից ածխաթթու գազի որսում՝ հեղուկ աբսորբենտի միջոցով (postcombustion մեթոդ),
- ✓ նախքան այրումը ածխի գազիֆիկացում և ածխածնի կապակցում (precombustion մեթոդ):

Ածխային վառելիքի օգտագործման առավել ուշագրավ լուծումներից մեկը ամերիկյան Foster Wheeler ընկերության մշակած գերկրիտիկական ճնշմամբ

եռացող շրջանառվող շերտով կաթսան է, որը թույլ է տալիս նվազագույն շահագործման ծախսերով էապես բարելավել կայանի էկոլոգիական անվտանգությունը: Շնորհիվ իրականացվող տեխնոլոգիական լուծման՝ այրման ակտիվ գոտում պահպանվում է ջերմաստիճանային ցածր մակարդակ, ինչի հետևանքով անհրաժեշտություն չի առաջանում իրականացնել ագոտի օքսիդների ելքի կրճատում, իսկ ծծմբային անհիդրիդի նվազեցումը կատարվում է կրային չոր աղիտիվ մեթոդով: Դիտարկվող դեպքում շրջանառվող եռացող շերտով շոգեկաթսաներից արտանետվող ածխածնի երկօքսիդի նվազեցման համար հարկավոր է լրացուցիչ կապիտալ ներդրումներով և շահագործման ծախսերով իրականացնել վերջինիս կապակցումը [2]:

Ածխափոշային էլեկտրակայանների մրցունակության և արդյունավետության բարձրացման հնարավորություններից մեկը ածխի գազիֆիկացման շնորհիվ դրա ապրանքային պոտենցիալի համալիր օգտագործումն է [3]: Մյուս կողմից՝ էներգաբլոկի տնտեսական և էկոլոգիական անվտանգության ցուցանիշների լավացման հիմնական սկզբունքներից մեկը վերջինիս օգտակար գործողության գործակցի մեծացումն է կամ էլ վառելիքի տեսակարար ծախսի նվազեցումը, ինչով էլ կկանխարգելվի մթնոլորտային օդի աղտոտումը: Շարադրվածի իրականացման ամենանպատակահարմար տարբերակը ածխի ներցիկային գազիֆիկացմամբ շոգեգազատուրբինային տեղակայանքների (IGCC) շահագործումն է, որի արդյունքները վկայում են, որ ածուխը կարող է դառնալ ոչ միայն էկոլոգիապես մաքուր վառելիք, այլ նաև արժեքավոր հումք՝ տարբեր անհրաժեշտ ապրանքների ստացման համար [4]:

Բնապահպանական խնդիրների լուծման համար ավելի քան 20 տարի է՝ հետազոտվում են շուկայական մեխանիզմների կիրառման հնարավորությունները, որոնք շատ հաճախ ավելի արդյունավետ են, քան ավանդական մոտեցումները (արտանետումների նորմավորում, աղտոտվածության համար վճարումներ և այլն): Առավել հեռանկարային շուկայական մեխանիզմներ են գումարային արտանետումների սահմանափակումը և քվոտների առևտուրը: Մկսած 2005 թ.-ից Եվրամիությունում գրանցված ձեռնարկությունների համար սահմանված են ջերմոցային գազերի արտանետումների քվոտներ, և գործում է դրանց առևտրի ներքին շուկա: Ձեռնարկությունները պարտավոր են անցկացնել ջերմոցային գազերի արտանետման ամենամյա հաշվառում և ներկայացնել հաշվետվություն: Եթե արտանետումները գերազանցում են քվոտը, ապա ձեռնարկությունը պարտավոր է տուգանք վճարել կամ ներկայացնել սահմանված նմուշի փաստաթուղթ այն մասին, որ որպես ներդրող և իրացնող մասնակցել է Գլոտոյի արձանագրության՝ ջերմոցային գազերի արտանետման կրճատման նախագծին, Եվրամիության սահմաններից դուրս այլ մասնակից երկրում: Ձեռնարկությունները կարող են


ազատ կերպով վաճառել և գնել քվոտներ, ինչպես նաև կուտակել դրանք՝ հետագայում օգտագործելու համար:

Կատարված աշխատանքի նպատակն է գնահատել ածխածնի երկօքսիդի կապակցման տեխնոլոգիաների հնարավոր ներդրման ազդեցությունը էլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների վրա՝ գերակա համարելով էկոլոգիական չափորոշիչը: Դեպի մթնոլորտ արտանետվող ածխածնի երկօքսիդի քանակությունը կարելի է կրճատել նախքան այրումը ածխի գազիֆիկացմամբ (և ստացվող սինթեզ գազի օգտագործմամբ), թթվածնային միջավայրում այրման գործընթացի կազմակերպմամբ և տարատեսակ մեմբրաններով ծխագազերից որսալով ածխածնի երկօքսիդը: Նշված տարբերակներից որևէ մեկի ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով նաև դրանց ներդրման համար պահանջվող կապիտալ և շահագործման ծախսերը: Թթվածնային միջավայրում այրում կազմակերպելու համար անհրաժեշտ է ՋԷԿ-ին կից ունենալ այրման գործընթացի կազմակերպման համար պահանջվող քանակությամբ թթվածնի ստացման բավականին թանկ հանգույց և թթվածնով աշխատող կաթսայական ագրեգատ: Նկարագրված մեթոդի համար որպես առավելություն կարելի է նշել CO₂-ի կապակցման նվազագույնը 80% արդյունավետությունը: Ածխածնի երկօքսիդի կապակցման համար նախատեսված ամենաարդյունավետ մեմբրաններ արտադրող եվրոպական NanoGLOWA ընկերության տվյալների համաձայն՝ 1 տ CO₂-ի կապակցման համար պահանջվող ծախսերը գտնվում են 15...20 *եվրո/տ* տիրույթում, մինչդեռ CO₂-ի արտանետումների շուկայում քվոտի արժեքը միջինացված կազմում է մոտ 20 *եվրո/տ*: Մեմբրանների միջոցով ածխածնի երկօքսիդի անջատում տեղի է ունենում կամ ծխագազերի բարձր ճնշման հաշվին, կամ էլ մեմբրանից հետո առկա նոսրացման հաշվին: Գոյություն ունի հստակ կապ կոմպրեսորի շարժաբերի համար ծախսված հզորության, մեմբրանի մակերեսի, վերջնարդյունքի որակի և գործընթացի արագության միջև: Ընդ որում, վերջնարդյունքի որակի բարձրացումը կամ հանգեցնում է գործընթացի արագության նվազման, կամ էլ ծախսվող էներգիայի քանակության մեծացման՝ դրանից բխող հետևանքներով: Բացի նշված հանգամանքներից, քանի որ ծխագազերից CO₂-ի զատումը համարվում է վերջնամաքման փուլ, ապա ածխափոշային ՋԷԿ-երում մեմբրանային մոդուլը տեղակայվում է մոխրի մասնիկներից, ծծմբի և ազոտի օքսիդներից ծխագազերի մաքրման տեղակայանքներից հետո:

Առաջնորդվելով օդային ավազանի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից էկոլոգիապես անվտանգ ՋԷԿ-երին ներկայացվող չափորոշիչներով՝ ավանդական ածխափոշային էլեկտրակայանը պետք է կահավորել մոխրի մասնիկների որսման էլեկտրագոյիչ, ծծմբային անհիդրիդից ծխագազերի մաքրման թաց կրային [5], ազոտի օքսիդների վերականգնման սելեկտիվ կատալիտիկ տեղա-

կայանքներով [6], ինչպես նաև ածխածնի երկօքսիդի որսման համապատասխան նանոմեմբրաններով: Կատարված հաշվարկների արդյունքները վկայում են այն մասին, որ ՋԷԿ-ի կահավորումը նշված տեղակայանքներով արդեն իսկ հանգեցնելու է (ի համեմատություն ավանդական ածխափոշային ՋԷԿ-ի) պահանջվող կապիտալ ներդրումների մոտ 30%-ով ավելացման, իհարկե, տարեկան շահագործման ծախսերը ևս աճելու են մոտ 25%-ով: Ծխագազերի մաքրման արդյունավետ համակարգերի ներդրմամբ ածխափոշային նույն 200 *ՄՎտ* հզորությամբ էներգաբլոկի տնտեսական ցուցանիշները համեմատվել են նախքան այրումը ածխի գազիֆիկացմամբ տարբերակի հետ: Հաշվարկներն իրականացվել են 26187.5 *կՋ/կգ* այրման ստորին ջերմությամբ գորշ ածխի գազիֆիկացումից ստացված սինթեզ գազով (կազմը՝ մոտ 40% H_2 , 15% CO , 30...35% CO_2 , 8% CH_4 և այլն, այրման ստորին ջերմությունը՝ 18430 *կՋ/կգ*): Նախքան այրումը ածխի գազիֆիկացմամբ տարբերակը էկոլոգիական տեսանկյունից արդարացված է, քանզի մինչ այրման գործընթացի իրականացումը հում սինթեզ գազը նախապես անցնում է մաքրման բազմաստիճան համակարգ, ինչի արդյունքում էլ վերանում է կարծր մասնիկներից և ծծմբի միացություններից ծխագազերի հետագա մաքրման անհրաժեշտությունը: Այս տարբերակի համար որպես առավելություններ կարող ենք նշել արտանետվող CO_2 -ի մինչև 90% կրճատման հնարավորությունը, մաքրման գործընթացի կազմակերպման համար ջրի և գոյացող պինդ թափոնների փոքր քանակությունը, ինչպես նաև ներդրման դյուրինությունը: Դիտարկվող տարբերակների համեմատական գնահատականը տալու համար հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ կրճատված CO_2 -ի փաստացի քանակության դիմաց ստացված հավաստագրով կարելի է դառնալ արտանետումների քվոտների շուկայի մասնակից (որում քվոտի արժեքը տատանվում է 10...35 *եվրո/տ* տիրույթում), դրանով իսկ մեղմելով շահագործման ծախսերի վրա ունեցած ազդեցությունը և նվազեցնելով կապիտալ ներդրումների հետգնման ժամկետը:

Ստորև պատկերված դիագրամում (նկ.) բերված են ծխագազերի մաքրման արդյունավետ համակարգերով և նախքան այրումը ածխի գազիֆիկացմամբ էլեկտրակայաններում կապիտալ և շահագործման ծախսերի, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ինքնարժեքի մեծության փոփոխությունները՝ կախված քվոտների շուկայում 1 *տ* CO_2 -ի վաճառքի գնից:



Նկ. Միացված գազերի մաքրման արդյունավետ համակարգերով կահավորված և նախքան այրումը ածխի գազիֆիկացմամբ էլեկտրակայանի կապիտալ ներդրումների, շահագործման ծախսերի և արտադրված էլեկտրական էներգիայի ինքնարժեքի կախվածությունը ածխածնի երկօքսիդի քվտների վաճառքի գնից

Ստացված արդյունքների վերլուծությունից եզրահանգում ենք, որ քվտների վաճառքից գոյացած լրացուցիչ գումարը ծխագազերի մաքրման արդյունավետ համակարգերով կահավորված էլեկտրակայանի շահագործման ծախսերի և արտադրված էլեկտրական էներգիայի ինքնարժեքի վրա ավելի մեծ ազդեցություն է ունենում, քան նախքան այրումը ածխի գազիֆիկացմամբ էլեկտրակայանի պարագայում: Նախքան այրումը ածխի գազիֆիկացմամբ էլեկտրակայանից դեպի շրջակա միջավայր CO₂-ի արտանետումները մոտ 45%-ով ավելի քիչ են, հետևաբար՝ անգամ շուկայում գործող քվտի վաճառքի առավելագույն գնով դրանց իրացման դեպքում վաճառքից ստացված գումարը տարեկան շահագործման ծախսերի և էլեկտրական էներգիայի ինքնարժեքի մեծությունները նվազեցնում է ընդամենը 12%-ով, մինչդեռ ծխագազերի մաքրման արդյունավետ համակարգերով կահավորված էլեկտրակայանի նույնանուն մեծությունները նվազում են գրեթե 30%-ով: Գնահատելով համեմատվող էլեկտրակայանների կապիտալ ներդրումների, շահագործման ծախսերի և արտադրված էլեկտրական էներգիայի ինքնարժեքի մեծությունները, ինչպես նաև CO₂-ի քվտների վաճառքի հանգամանքը՝ հստակորեն կարելի է փաստել, որ նախքան այրումը ածխի գազիֆիկացման տարբերակը, իր էկոլոգիական բոլոր առավելություններով հանդերձ, տնտեսապես ավելի նպատակահարմար է կիրառել առավել մեծ օ.գ.գ. ունեցող շոգեգազատուրբինային տեղակայանքներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Современные природоохранные технологии в электроэнергетике: Инф. сб. / Под ред. **В.Я. Путилова**. - М.: Издательский дом МЭИ, 2007.- 388 с.
2. **Рябов Г.А., Фоломеев О.М., Литун Д.С.** Перспективы использования технологии ЦКС при техническом перевооружении ТЭС России // Теплоэнергетика. - 2009.- № 1. - С. 28-36.
3. **Рябов Г.А., Фоломеев О.М., Санкин Д.А.** Сепарация CO₂ с использованием химических циклов сжигания и газификации топлив // Теплоэнергетика. - 2009. - № 6.- С. 39-49.
4. **Батенин В.М., Масленников В.М., Выскубенко Ю.А, Штеренберг В.Я.** Сравнительный технико-экономический анализ вариантов использования угля в ПГУ с минимальными выбросами диоксида углерода в атмосферу // Теплоэнергетика. – 2007.- № 1. - С. 24-30.
5. **Մարուխյան Ռ.Զ., Էլբակյան Ս.Հ.** Ծծմբի միացություններից ծխազագերի մաքրման գործընթացի ազդեցությունը էլեկտրական էներգիայի ինքնարժեքի վրա // ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածու. - Երևան, 2010.- Հատոր 2, № 2. - էջ 376-380:
6. **Մարուխյան Ռ.Զ., Էլբակյան Ս.Հ.** Ազոտի օքսիդների նվազեցման միջոցառումների համադրական վերլուծություն // ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածու. - Երևան, 2011.- Հատոր 2. - էջ 392-397:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 20.03.2017:

В.З. МАРУХЯН, С.Г. ЭЛБАКЯН

ОЦЕНКА ВЛИЯНИЯ ПРОЦЕССА СВЯЗЫВАНИЯ ДИОКСИДА УГЛЕРОДА НА ПОКАЗАТЕЛИ ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ В ТЕПЛОВЫХ ЭЛЕКТРИЧЕСКИХ СТАНЦИЯХ

Учитывая вклад диоксида углерода, как парникового газа, в процесс глобального потепления, анализируются технологические решения его связывания и возможности реализации в экологически безопасных теплоэлектростанциях. В электрических станциях, оснащенных эффективными системами очистки дымовых газов и газификации угля до сжигания, оценено влияние сокращения CO₂ и торговли квотами на экономическую эффективность.

Ключевые слова: экологически безопасная теплоэлектростанция, системы очистки дымовых газов, газификация угля, парниковый газ, диоксид углерода, торговля квотами.

V.Z. MARUKHYAN, S.H. ELBAKYAN

**EVALUATING THE IMPACT OF THE CARBON DIOXIDE CAPTURING
PROCESS ON THE INDICES OF ECONOMIC EFFICIENCY IN
THERMAL POWER PLANTS**

Taking into account the input of carbon dioxide as a greenhouse gas in the global warming process, the technological solutions of its capturing, and the implementation possibilities in environmentally safe thermal power plants are considered. In power plants equipped with effective systems for cleaning the fuel gas and the coal gasification, the influence of the CO₂ reduction and realization of quotes on the indices of economic efficiency is estimated.

Keywords: environmentally safe thermal power plant, fuel-gas cleaning systems, coal gasification, greenhouse gas, carbon dioxide, emission quote trading.


Լ.Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ռ.Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ՏԵՂԱԿԱՅԱՆՔ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՕԴԻ՝ ՍԱՌԱՐԱՆԱՅԻՆ
ՄԵՔԵՆԱՅՈՎ ՀՈՎԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ՕՊՏԻՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկվել է գազատուրբինային տեղակայանքի (ԳՏՏ) կոմպրեսոր մատուցվող մթնոլորտային օդը արտաբերվող բրոմալիթիումային սառնարանային մեքենայի (ԱԲՄՄ) միջոցով հովացնելու տեխնիկատնտեսական շահավետությունը: Գնահատվել է ԱԲՄՄ-ի արդյունավետությունը: Վերլուծվել է հովացման համակարգը նախագծելիս մթնոլորտային օդի առավել նպատակահարմար հաշվարկային ջերմաստիճանի ընտրության հարցը:

Առանցքային բառեր. ԳՏՏ-ի մուտքում օդի հովացում, արտաբերվող բրոմալիթիումային սառնարանային մեքենա, զուտ բերված շահույթ:

Սառնարանային մեքենաների միջոցով տեղակայանք մատուցվող օդի հովացումը (նկ.1) հնարավորություն է տալիս նվազեցնել մթնոլորտային օդի պարամետրերի ազդեցությունը շոգեգազային տեղակայանքների (ՇԳՏ) էներգետիկական ցուցանիշների վրա՝ պահպանելով ներծծվող օդի հաստատուն ջերմաստիճան կոմպրեսորի մուտքում [1]:




Նկ. 1. Ներծծվող օդի հովացմամբ շոգեգազային համակցված ցիկլով տեղակայանքի սկզբունքային սխեման:

I - արտաբերվող հովացման համակարգ, *II* - երկկոնտուր օգտահանիչ կաթսայով ՇԳՏ:

1 - գեներատոր, 2 - կոնդենսատոր, 3 - գոլորշացուցիչ, 4 - արտաբեր, 5 - արտաքին օդ, 6 - հովացված օդ, 7 - կոմպրեսոր, 8 - գազային տուրբին, 9 - շոգետուրբին, 10 - օգտահանիչ կաթսա, 11 - ՕԿ-ից դեպի ԱԲՄՄ-ի գեներատոր տրվող ջերմություն

Ներծծվող օդի հովացման համար ընտրված է հեղեղված տիպի գեներատորով, արտորբերում և գոլորշացուցիչում համապատասխանաբար ցածր կոնդենստացիայով լուծույթի ու ջրի վերաշրջանառությամբ սառնարանային մեքենայի սխեման (նկ.2): Հովացնող ջրի մատուցումը արտորբեր և կոնդենսատոր զուգահեռ է:



Նկ. 2. ԱՄՄՄ-ի սխեման (ա) և պրոցեսները $\xi - i$ դիագրամի վրա (բ).
 I – կոնդենսատոր, II – գեներատոր, III – գոլորշացուցիչ, IV, VI, VII – համապատասխանաբար շրջապտույտային ջրի, լիթիումի բրոմիդի խառնված և նոսր լուծույթների պոմպերը, V – արտորբեր, VIII – ռեկուպերատիվ ջերմափոխանակիչ

Ելակետային տվյալներն են. տաքացնող ջրի ջերմաստիճանը՝ $t_h = 98^\circ\text{C}$, հովացնող՝ $t_w = 22^\circ\text{C}$, սառեցված՝ $t_3 = 7^\circ\text{C}$:

Առավելագույն ջերմաստիճանը գեներատորում լուծույթի եռման պրոցեսի վերջում. $t_4 = t_h - \Delta t_h = 98 - 10 = 88^\circ\text{C}$: Ջրային գոլորշու կոնդենսացման ջերմաստիճանը ընդունված է հավասար $t_k = t_w + \Delta t_w = 22 + 8 = 30^\circ\text{C}$, լուծույթի ջերմաստիճանը արտորբման պրոցեսի վերջում՝ $t_2 = t_w + \Delta t_a = 22 + 8 = 30^\circ\text{C}$, գոլորշացուցիչում ջրի եռման ջերմաստիճանը՝ $t_0 = t_3 - \Delta t_3 = 7 - 3 = 4^\circ\text{C}$: Ուստի բանող մարմնի կոնդենսացման ճնշումը կլինի $p_k = 4,241 \text{ կՊա}$, և եռման ճնշումը՝ $p_0 = 0,83 \text{ կՊա}$: Գոլորշու շարժման արագությունը գեներատորից կոնդենսատոր ցածր է, հետևաբար, հիդրավիկական դիմադրությունները կարելի է անտեսել և գեներատորում լուծույթի եռման ճնշումը p_h ընդունել հավասար գոլորշու կոնդենսացման ճնշմանը՝ $p_h = p_k$: Արտորբեր-գոլորշացուցիչ բլոկում գոլորշու տեսակարար ծավալի բարձր արժեքի պատճառով գոլորշացուցիչից արտորբեր դրա հոսքի արագությունը կլինի զգալի (40...50 մ/վ), ուստի անհրաժեշտ է հաշվի առնել գումարային հիդրավիկական դիմադրությունը, որը փորձնական տվյալների համաձայն՝ արդյունաբերական նշանակության մեքենաներում հասնում է $\Sigma \Delta p = 0,13 \text{ կՊա}$: Այդ դեպքում արտորբերում գոլորշու ճնշումը՝ $p_a = p_0 - \Sigma \Delta p = 0,7 \text{ կՊա}$:

Նոսր ξ_a^* և խիտ ξ_r^* լուծույթների կոնցենտրացիաների տեսական արժեքները որոշվում են ըստ $\xi - i$ դիագրամի՝ T_2, p_a և T_4, p_h համապատասխան արժեքների համաձայն [2]: Խիտ լուծույթի իրական կոնցենտրացիան տեսական արժեքից ցածր է լուծույթից ջրի ոչ լրիվ գոլորշացման չափով $\Delta\xi_r$, իսկ նոսր լուծույթի իրական կոնցենտրացիան արտորբերում տեսական արժեքից բարձր է լուծույթի թերհագեցման մեծության չափով $\Delta\xi_a$: Նկ. 2-ում պատկերված ցիկլերի հանգուցային կետերի պարամետրերը ներկայացված են աղ.1-ում:

Աղյուսակ 1

ԱՐՄՄ-ի հանգուցային կետերի պարամետրերը

Նյութի վիճակը	t, °C	p, կՊա	ξ , %	i, կՋ/կգ
Ջուրը կոնդենսատորից հետո	$t_k = t_2 = 30$	$p_k = 4,24$	$\xi = 0$	$i_3 = 544,3$
Լուծույթը. նոսր արտորբերից հետո	$t_2 = 30$	$p_a = 0,7$	$\xi_a = 58$	$i_2 = 245,6$
Խիտ գեներատորից հետո	$t_4 = 88$	$p_h = 4,24$	$\xi_r = 64$	$i_4 = 361,7$
Խիտ ջերմափոխանակիչից հետո	$t_8 = 45$	$p_h = 4,24$	$\xi_r = 64$	$i_8 = 279,3$
Ջուրը գոլորշացուցիչում	$t_0 = t_1 = 4$	$p_0 = 0,83$	$\xi = 0$	$i_1 = 435,5$
Գոլորշին գոլորշացուցիչից հետո	$t_1 = 4$	$p_0 = 0,83$	$\xi = 0$	$i_{1'} = 2914,2$

Օգտագործելով լուծույթի շրջանառության բազմապատիկը՝ հաշվարկվում են ռեկուպերատիվ ջերմափոխանակիչի ջերմությունը q_{ρ} և նոսր լուծույթի էնթալպիան ջերմափոխանակիչից հետո i_7 .

$$f = \xi_r / (\xi_r - \xi_a) = 64 / (64 - 58) = 10,7 \text{ կգ/կգ,}$$

$$q_{\rho} = (f - 1)(i_4 - i_8) = 799,3 \text{ կՋ/կգ,}$$

$$i_7 = i_2 + q_{\rho} / f = 320,3 \text{ կՋ/կգ.}$$

Նոսր լուծույթը գեներատորի մուտքում թերտաքացած է, այն գեներատորում նախ տաքացվում է մինչև հավասարակշռության վիճակին՝ 5 հասնելը և ապա եռում է 5-4 պրոցեսում:

Գեներատորում եռացող լուծույթի միջին ջերմաստիճանին համապատասխանող լուծույթի կոնցենտրացիան հավասար է $\xi_l = 61\%$: Գերտաք գոլորշու էնթալպիան գեներատորի ելքում որոշում են $\xi - i$ դիագրամից ըստ հայտնի p_h և ξ_l արժեքների. $i_{3'} = 3052 \text{ կՋ/կգ}$: Գեներատորի ջերմությունը՝
 $q_h = i_{3'} + (f - 1)i_4 - fi_7 = 3052 + (10,7 - 1) \cdot 361,7 - 10,7 \cdot 320,3 = 3133 \text{ կՋ/կգ.}$

Գոլորշացուցիչի ջերմությունը՝ $q_0 = i_{1'} - i_3 = 2914,2 - 544,3 = 2370 \text{ կՋ/կգ}$: Կոնդենսատորի ջերմությունը՝ $q = i_{3'} - i_3 = 3052 - 544,3 = 2508 \text{ կՋ/կգ}$: Արտորբերի

ջերմությունը՝ $q_a = i_1 + (f - 1)i_8 - fi_2 = 2914,2 + (10,7 - 1) \cdot 279,3 - 10,7 \cdot 245,6 = 2995$ կՋ/կգ Ջերմային հաշվեկշիռը՝ $q_h + q_0 = q + q_a = 5503$ կՋ/կգ Ջերմության օգտագործման գործակիցը.

$$\zeta = \frac{q_0}{q_h} = \frac{2370}{3133} = 0,756: \quad (1)$$


Անվանական պարամետրերով աշխատող գազաջրային տաքացուցիչի (ԳՋՏ) ջերմությունը ամբողջությամբ օգտագործող 7782 կՎտ ցրտարտադրողականությամբ ԱԲՄՄ-ի ելքում տաքացնող ջրի ջերմաստիճանը կկազմի $t' = 98 - 10 = 88^\circ\text{C}$: Ընդ որում, տաք ջրի հոսքից տրված ջերմությունը կկազմի. $Q_\rho = \frac{Q_0}{\zeta} = 7782/0,756 = 10294$ կՎտ: Հետևաբար՝ պահանջվող տաք ջրի (98°C) ծախսը հավասար կլինի. $G_\rho = Q_\rho/(i'' - i') = 245$ կգ/վ:

Տաք ջուրն արտադրվելու է հեռացող ծխագազերից չորս ջերմափոխանակիչների միջոցով օգտահանվող ջերմության հաշվին: Գազաջրային տաքացուցիչն ունի շախմատաձև խողովակափնջերում գազերով լայնակիորեն ողողվող, արտաքինից կողավորված խողովակների տեսքով տաքացման մակերևույթ: Կոնվեկտիվ տաքացման մակերևույթների հաշվարկը հիմնվում է ջերմային հաշվեկշռի հավասարումների համակարգի և ջերմափոխանակության հավասարման համատեղ լուծման վրա [3]: Տաքացուցիչի ելքում գազերի ջերմաստիճանի որոշման համար կազմենք տաքացուցիչի ջերմային հաշվեկշռի հավասարումը. $Q_\rho = Q_q$, որտեղ $Q_q = G_q(h' - h'')$ -ը տաքացուցիչում գազերից ջրին փոխանցված ջերմությունն է, G_q -ը՝ տաքացուցիչներում գազերի ծախսը, h' -ը՝ տաքացուցիչի մուտքում գազերի էնթալպիան: Տաքացուցիչի ելքում գազերի էնթալպիան՝ h'' կորոշվի հետևյալ արտահայտությունից.

$$h'' = h' - \frac{G_\rho(i'' - i')}{G_q} = 130 - \frac{245 \cdot (412 - 370)}{512,7} = 109,9 \text{ կՋ/կգ}: \quad (2)$$

Գազերի ջերմաստիճանը տաքացուցիչի ելքում կկազմի $\vartheta'' = 106,4^\circ\text{C}$:

Տաքացուցիչում կիրառված է խաչաձև հոսքով ըստ ջրի եռաքայլ սխեմա (նկ.3): Ջերմափոխանցման գործակցի $k = 66,5$ Վտ/($u^2 \cdot \vartheta$) դեպքում մեկ տաքացուցիչում անհրաժեշտ ամբողջ տաքացման մակերևույթի մակերեսը 1818,9 u^2 է, հետևաբար, կողավորված խողովակների ընդհանուր երկարությունը կկազմի 2135 u : Տաքացուցի տրված երկրաչափական պարամետրերի դեպքում այդպիսի ջերմափոխանակիչի արժեքը, եթե տեսակարար ծախսերը մեկ մետր երկարությամբ կողավորված խողովակին վերագրած 20,4 \$/մ են, կկազմի 44 880 ԱՄՆ դոլ.: Ջերմափոխանակիչների ձեռքբերման վրա կատարվող ներդրումները վերագրենք փոխանցվող միավոր ջերմաքանակին, կստանանք. $4 \cdot 44 880/10 305$ կՎտ = 17,4 \$/կՎտ:



Նկ. 3. Տաքացուցիչում միջավայրերի շարժման սխեման

ԱԲՄՄ-ում ցուրտն արտադրվում է ԳՋՏ-ում ԳՏՏ-ից հեռացող ծխագազերի օգտահանման հաշվին ստացված ջերմության օգտագործմամբ, այսինքն՝ առանց դրա արտադրության վրա էներգիայի լրացուցիչ քանակություն ծախսելու:

Ելնելով վերը նշվածից՝ կատարենք ՇԳՏ-ում կոմպրեսոր ներծծվող օդի՝ ԱԲՄՄ-ի միջոցով հովացման տնտեսական արդյունավետության գնահատումը: Հովացման համակարգի տեղադրման կապիտալ ներդրումների հիմնական բաղադրիչներն են աբսորբցիոն սառնարանային տեղակայանքի և ջերմա-փոխանակիչների կապիտալ ծախսերը: Որպես ջերմության աղբյուր տաք ջուր օգտագործող միաստիճան աբսորբցիոն սառնարանային մեքենայի (5...12 ՄՎտ) կապիտալ ծախսերը, հովացնող ջրի աշտարակահովացուցիչի արժեքը ներառյալ, կազմում են մոտ 190\$/կՎտ: Ներծծվող օդը հովացնող ջերմափոխանակիչի վրա կատարվող ծախսերը հաշվվում են 17,4\$/կՎտ $Q_{\text{ս}}$ և ԳՋՏ-ի վրա կատարվող ծախսերը՝ 17,4\$/կՎտ $\cdot Q_{\text{ջ}}$, որտեղ $Q_{\text{ս}}$ -ը ԱԲՄՄ-ի ցրտարտադրողականությունն է, իսկ $Q_{\text{ջ}}$ -ը՝ աշխատանքի համար անհրաժեշտ ջերմության քանակությունը՝ $Q_{\text{ջ}} = Q_{\text{ս}}/\zeta$:

Հովացման համակարգի վրա կատարվող գումարային կապիտալ ներդրումներն օդի տարբեր հաշվարկային ջերմաստիճանների՝ $t_{\text{ս.օդ}}^{\text{ն}}$ -ի դեպքում ամփոփված են աղ. 2-ում:

Որպես ԳՏՏ-ի կոմպրեսորի մուտքում ԱԲՄՄ-ով օդի հովացման տնտեսական արդյունք հանդես է գալիս միևնույն վառելիքի ծախսի պայմաններում ($B=\text{idem}$) հովացման արդյունքում արդյունավետության բարձրացման շնորհիվ հավելյալ արտադրված էլեկտրական էներգիայի առևտրային իրացումից ստացված եկամուտը: Տարեկան դրամական հոսքը կորոշվի հետևյալ բանաձևով.

$$CF_{\text{տ}} = U_{\text{էլ}} \cdot (E_{\text{հով}} - E_{\text{առանց}}), \quad (3)$$

որտեղ $U_{\text{էլ}}$ -ը «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի կողմից առաքված էլեկտրական էներգիայի սակագնի դրույքն է, որը 2016թ. III-

եռամսյակում կազմել է $U_{\text{էլ}} = 21,3 \text{ ճր/կՎտժ}$, $E_{\text{հոլ}}$ և $E_{\text{առանց}}$ -ը, համապատասխանաբար, հոլացմամբ և առանց հոլացման ԳՏՏ-ով արտադրված էլեկտրաէներգիան է, երբ վառելիքի ծախսն այրման խցում միևնույնն է և հավասար առանց հոլացման մթնոլորտային օդի ջերմաստիճանին համապատասխանող վառելիքի ծախսին՝ $B_{\text{առանց}}$, $կգ/վ$:

Արտադրված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է $E = N_{\text{ԳՏՏ}}^{\text{է}} \cdot \tau_{\text{հոլ}}$ բանաձևից, ընդ որում՝ $N_{\text{ԳՏՏ}}^{\text{է}} = B \cdot Q_u^{\text{է}} \cdot \eta_{\text{ԳՏՏ}}$, հետևաբար՝ (3)-ից կստանանք.

$$CF_{\text{տ}} = U_{\text{էլ}} \cdot B_{\text{առանց}} \cdot Q_u^{\text{է}} \cdot \tau_{\text{հոլ}} (\eta_{\text{հոլ}}^{\text{ԳՏՏ}} - \eta_{\text{առանց}}^{\text{ԳՏՏ}}), \quad (4)$$

որտեղ $\tau_{\text{հոլ}}$ -ը սառնարանային մեքենայի աշխատանքի ժամերի թիվն է, ժ , $Q_u^{\text{է}}$ -ը՝ վառելիքի այրման ջերմությունը, $Q_u^{\text{է}} = 47372 \text{ կՋ/կգ}$, $\eta_{\text{հոլ}}^{\text{ԳՏՏ}}$, $\eta_{\text{առանց}}^{\text{ԳՏՏ}}$ -ը՝ ԳՏՏ-ի օ.գ.գ.-ի արժեքներն են, համապատասխանաբար, հոլացմամբ և առանց հոլացման:

Վերջիններս կարելի է որոշել հաշվարկների արդյունքների հիման վրա ստացված արտաքին օդի ջերմաստիճանից t դրանց կախվածությունն արտահայտող հետևյալ արտահայտությունից.

$$\eta_{\text{ԳՏՏ}} = 0,3579 \cdot e^{-0,00242 \cdot t},$$

իսկ վառելիքի ծախսի համար կարող ենք գրել.

$$B = 10,14 \cdot e^{-0,00479 \cdot t}:$$


$\tau_{\text{հոլ}}$ -ը հաշվելու համար անհրաժեշտ է իմանալ տարվա ընթացքում ջերմաստիճանների փոփոխության բնույթը: Միջին ջերմաստիճանի փոփոխությունը Երևան քաղաքի համար արտահայտելու համար հեղինակների կողմից ստացվել է հետևյալ կախվածությունը.

$$t = 11,3 + 15,2 \cdot \sin\left(\frac{2\pi}{9500} \cdot (\tau - 2450)\right), \quad (5)$$


որտեղ τ -ը ժամերի թիվն է տարվա սկզբից: Այս արտահայտությամբ որոշված միջին ջերմաստիճաններն ըստ ամիսների համադրվել են [4]-ում բերված կլիմայական տվյալների հետ: Ստացված արտահայտության հիման վրա որոշվել է որոշակի t միջին ջերմաստիճանից բարձր արտաքին օդի ջերմաստիճանով տարվա ընթացքում գումարային ժամերի քանակը (նկ.4):

Տարեկան դրամական հոսքերը որոշելուց հետո (աղ. 2) կարող ենք գտնել նախագծի իրականացման արդյունքում ստացված զուտ բերված շահույթը (NPV), որի հիման վրա կորոշվի արտաքին օդի օպտիմալ հաշվարկային ջերմաստիճանի արժեքը, որի համար ԱԲՄՄ-ը նախագծելու դեպքում ստացվող շահույթը կլինի առավելագույնը:

Հաշվարկը կատարվել է 10 տարի ժամանակահատվածի համար, որպես դիսկոնտավորման դրույք դիտարկվել է երկու արժեք (նկ.5). առաջին դեպքում R-ն ընդունվել է հավասար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքին՝ R=5%, իսկ երկրորդ դեպքում բանկային տոկոսի հաշվարկային դրույքին՝ R=12%, դրամը ԱՄՆ դոլարի վերահաշվարկելիս օգտագործվել է ԿԲ սահմանած 19.12.2016 փոխարժեքը՝ 1 USD=482,68 դր:



Նկ. 4. t միջին արժեքից բարձր արտաքին օդի ջերմաստիճանով ժամերի քանակը



Նկ. 5. Ջուտ բերված շահույթը տարբեր դիսկոնտավորման դրույքների դեպքում

Աղյուսակ 2

ԱՔՄՄ-ի միջոցով ներծծվող օդի հովացման համակարգի տեխնիկատնտեսական ցուցանիշները


$t_{\text{արտ}}^{\text{ն}},$ °C	$Q_{\text{ԱՔՄՄ}},$ կՎտ	Ջերմափոխանակիչից հետո ծխագազերի ջերմաստիճանը՝ θ'' , °C	Ընդհանուր կապիտալ ներդրումները, դոլ.	$CF_{\text{տ}},$ դոլ./տարի	Պարզ հետզնման ժամկետը, տարի
30	11673	97	2689627	616845	4.36
29	11024	98	2540204	619807	4.10
28	10376	100	2390780	622783	3.84
27	9727	102	2241356	625773	3.58
26	9079	103	2091932	628778	3.33
25	8430	105	1942509	619505	3.14
24	7782	106	1793085	600997	2.98
23	7133	108	1643661	575898	2.85
21	5836	111	1344814	509621	2.64
19	4539	114	1045966	424786	2.46

Օգտահանիչ կաթսայի հաշվարկի արդյունքում ստացված տվյալների և առնչությունների հիման վրա որոշվել է հեռացող ծխագազերի ջերմաստիճանը՝ θ'' դրանց ջերմության հաշվին սառնարանային մեքենայի միջոցով ներծծվող օդի հովացման համակարգի կիրառման դեպքում: Բնչալես երևում է աղ. 2-ից, $\theta'' > 100^\circ\text{C}$ պայմանը պահպանելու նպատակով (ծխագազերում առկա ջրային գոլորշիների

կոնդենսացումից հետագա թթվային միջավայրի ստեղծումից խուսափելու համար) ԱԲՄՄ-ի ցրտարտադրողականությունը պետք է սահմանափակվի 10 ՄՎտ-ով, իսկ $t_{w.o\eta}^{\text{հ}}$ -ը, համապատասխանաբար, 28°C-ով:


Արտաքին օդի ջերմաստիճանի հաշվարկային արժեքը $t_{w.o\eta}^{\text{հ}}$ որոշելիս կարևոր դերակատարություն ունի դիսկոնտավորման դրույքի R ճիշտ որոշումը, քանի որ այն զգալիորեն ազդում է NPV-ի վրա (նկ.5): Այսպես, պարզ հետզնման ժամկետը և եկամուտը գնահատելիս ($R=0$) օպտիմալ արտաքին օդի ջերմաստիճանը կազմել է $t_{w.o\eta}^{\text{հ}} = 25^{\circ}\text{C}$, որի դեպքում ԱԲՄՄ-ի տեղադրումից 10 տարի անց շահույթն առավելագույնն է՝ 4253 հզ. ԱՄՆ դոլ., իսկ հետզնման ժամկետը՝ $PBP=3,14$ տարի: $R=5\%$ դեպքում (նկ.6) օպտիմալ է $t_{w.o\eta}^{\text{հ}} = 24^{\circ}\text{C}$, որի դեպքում $PBP=4$ տարի, իսկ $NPV=2848$ հզ. ԱՄՆ դոլ.: Մինչդեռ $R=12\%$ դեպքում օպտիմալ է $t_{w.o\eta}^{\text{հ}} = 23^{\circ}\text{C}$, որի դեպքում $PBP=4$ տարի, իսկ $NPV=1610$ հզ. ԱՄՆ դոլ.:

Ինչպես երևում է ստացված գրաֆիկից (նկ.6), էական նշանակություն ունի նախագծի տևողության ընտրությունը, քանի որ տարբեր $t_{w.o\eta}^{\text{հ}}$ -ից կախված $CF_{\text{տ}}$ -ի արժեքները զգալիորեն տարբերվում են, և նախագծի տևողությունից կախված՝ առավելագույն NPV-ին համապատասխանող $t_{w.o\eta}^{\text{հ}}$ -ը կարող է փոխվել:



Նկ. 6. Ձուտ բերված շահույթը $t_{w.o\eta}^{\text{հ}}$ -ի տարբեր արժեքների դեպքում

Կոմպլեքտը ներծծվող օդի հովացման համակարգը նախագծելիս պետք է նաև հաշվի առնել, որ շահութաբերության ներքին նորմը (IRR) զգալիորեն փոփոխվում է՝ ընտրված ԱԲՄՄ-ի ցրտարտադրողականությունից կախված: Ինչպես երևում է նկարից (նկ.7), արտաքին օդի հաշվարկային արժեքից $t_{w.o\eta}^{\text{հ}}$ կախված՝ IRR-ը զգալիորեն նվազում է:



Նկ. 7. IRR-ի կախվածությունը արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանից

Եզրակացություն: Մշակվել է ծխագազերի ջերմությունը օգտահանող, ԳՏՏ ներծծվող օդի աբսորբցիոն հովացման համակարգի նախագծման փուլում էներգետիկական և տնտեսական շահավետության հաշվարկի հիման վրա արտաքին օդի հաշվարկային օպտիմալ ջերմաստիճանի որոշման մեթոդ: Որպես օպտիմալ ընտրվել է $t_{w, օդ}^h = 24\text{ }^{\circ}\text{C}$ ($Q_{UFUU} \approx 7,8\text{ ՄՎտ}$):

Հաշվարկի արդյունքներից ակնհայտ է, որ Երևանի պայմաններում ԳՏՏ-ի կոմպրեսորի մուտքում ԱԲՄՄ-ի միջոցով օդի հովացման համակարգի կիրառումը տնտեսապես շահավետ է: Երևանի ՋԷԿ-ի շոգեգազային էներգաբովի օրինակով այդպիսի համակարգի հետգնման ժամկետը կազմել է 3...4 տարի, տարեկան շահութաբերությունը՝ մոտ 601 հզ. ԱՄՆ դոլ. (290 մլն. դր):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Սարգսյան Ա.Գ., Խաչատրյան Ռ.Գ.** Գազատուրբինային տեղակայանքների մուտքում օդի հովացման արդյունավետության ջերմատնտեսական մեթոդի վերլուծություն // ՀՀԱ Լրաբեր. – 2016.- Հ.13, №2. – Էջ 249-254:
2. Термодинамические свойства водных растворов бромистого лития / **О.И. Вербя, В.А. Груздев, А.Г. Захаренко и др.** // Теплофизические свойства растворов: Сб. научн. тр.- Новосибирск: Изд-во Ин-та теплофизики, 1983. - С. 19-34.
3. **Тепловой расчет котлов** (Нормативный метод). - СПб.: НПО ЦКТИ, 1998. - 256 с.
4. **ՀՀՇՆ II-7.01-2011** Շինարարական կլիմայաբանություն

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 01.04.2017:

Л.С. ОГАНЕСЯН, Р.Г. ХАЧАТРЯН

**ВЫБОР ОПТИМАЛЬНОГО ЗНАЧЕНИЯ РАСЧЕТНОЙ ТЕМПЕРАТУРЫ ПРИ
ПРОЕКТИРОВАНИИ СИСТЕМЫ ХОЛОДИЛЬНОГО ОХЛАЖДЕНИЯ
ВОЗДУХА, ПОСТУПАЮЩЕГО В ГАЗОТУРБИННУЮ УСТАНОВКУ**

Рассмотрена технико-экономическая эффективность охлаждения абсорбционной бромистолитиевой холодильной машиной (АБХМ) атмосферного воздуха, поступающего в компрессор газотурбинной установки. Оценена эффективность АБХМ. Анализирован вопрос выбора оптимальной расчетной температуры наружного воздуха при проектировании системы охлаждения.

Ключевые слова: охлаждение поступающего в газотурбинную установку воздуха, абсорбционная бромистолитиевая холодильная машина, чистый дисконтированный доход.

L.S. HOVHANNISYAN, R.G. KHACHATRYAN

**SELECTING THE OPTIMAL VALUE OF CALCULATION TEMPERATURE AT
DESIGNING A REFRIGERATION COOLING SYSTEM OF THE AIR
ENTERING THE GAS - TURBINE PLANT**

The technical and economic efficiency of the gas-turbine compressor inlet air cooling by means of a lithium-bromide absorption chiller is investigated. The efficiency of LiBr AC is estimated. The issue on selecting the optimal outdoor air temperature at designing the cooling system is analyzed.

Keywords: gas-turbine inlet air cooling, lithium-bromide absorption chiller, net present value.

ՀՏԴ 621. 316

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ

Ա.Թ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Գ.Մ. ՄԻՆԱՍՅԱՆ, Տ.Ռ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Կ.Ռ. ԵՆՈՔՅԱՆ,
Ա.Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՐԹ ՎԵՐԱՄԲԱՐԶ ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳ**

Մշակվել է հարթ վերամբարձ էլեկտրամագնիսի նախագծման ավտոմատացված համակարգ՝ բաղկացած երկու ենթահամակարգից՝ աշխատանքային և լավարկման: Համակարգը հնարավորություն է տալիս երկխոսության ռեժիմում իրականացնել սարքի նախագծում՝ լավարկված պարամետրերով, ստանալով անհրաժեշտ տեղեկություններ թվային արժեքների տեսքով:

Առանցքային բառեր. հարթ վերամբարձ էլեկտրամագնիս, կառավարման փաթույթ, ավտոմատ նախագիծ, երկխոսության ռեժիմ, լավարկում:

Ներածություն: Հարթ վերամբարձ էլեկտրամագնիսները (ՀՎԷ) կիրառվում են ֆերոմագնիսական նյութից պատրաստված սարքերի, մետաղամնացորդի, ձուլակի և այլ տեսակի բեռների տեղափոխման համար: Երբեմն օգտագործվում են որպես էլեկտրամագնիսական փական: Դրանք ունեն պարզ կառուցվածք, հավաքման տեխնոլոգիա և կառավարում, բարձր ամրություն և երկարակեցություն, աշխատանքային պարամետրերի կայունություն:


Վերամբարձ էլեկտրամագնիսները նախատեսված են աշխատելու հաստատուն մագնիսական դաշտով, որի համար էլ սնվում են հաստատուն լարման աղբյուրից՝ երկարատև, կարճատև կամ կարճատև կրկնվող ռեժիմներում:

ՀՎԷ-ը բաղկացած է ֆերոմագնիսական պողպատից պատրաստված մագնիսալարից և նրա մեջ տեղադրված կառավարման փաթույթից (ԿՓ), ընդ որում՝ փաթույթը կարող է լինել կարկասով (կոճ) կամ առանց կարկասի (փաթույթ):

Նկ. 1-ում պատկերված է ՀՎԷ-ի կառուցվածքային սխեման՝ բեռի փոխադարձ դասավորվածությամբ, որտեղ 1-ը էլեկտրամագնիսի մագնիսալարն է, 2-ը՝ ԿՓ-ն, 3-ը՝ բեռը, իսկ ծ-ով նշանակված է աշխատանքային օդային բացակը:

Բեռի բարձրացումն ու տեղափոխումն իրականացվում է հետևյալ կերպ: Էլեկտրամագնիսը մոտեցվում է բեռին, ընդհուպ նրան հպվելը, որից հետո ԿՓ-ն միացվում է հաստատուն լարման աղբյուրին: Էլեկտրական հոսանքի և ԿՓ-ի զալարների միջոցով ստեղծվում են մագնիսաշարժ ուժ (ՄՇՈՒ) և մագնիսական դաշտ, որի Փճ աշխատանքային ուժագծերն անցնելով մագնիսալարի կենտրոնական S_1 մակերեսով՝ պայմանավորված r_1 շառավղով, δ չափով աշխատանքային

օդային բացակով ու ճյուղավորվելով բեռի աջ ու ձախ մասերով, նորից անցնում են δ -ով և էլեկտրամագնիսի եզրային S_2 մակերեսով՝ պայմանավորված (r_3-r_2) շառավիղների տարբերությամբ: Ստեղծվում է էլեկտրամագնիսական $P_{էլ}$ ձգող ուժ, որի անհրաժեշտ մեծության դեպքում բեռը ձգվում է դեպի էլեկտրամագնիս-ը, և կարող են միասին տեղափոխվել ըստ նպատակի: ԿՓ-ն լարման աղբյուրից անջատելիս, այսինքն հոսանքազրկելով՝ բեռն անջատվում է էլեկտրամագնիսից՝ ի հաշիվ բեռի ծանրության ուժի:



Նկ. 1. ՀՎԷ-ի հիմնական հանգույցները և բեռի հետ փոխադարձ դասավորվածությունը

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Վերամբարձ էլեկտրամագնիսի հաշվարկի և նախագծման համար որպես ելակետային են ընդունվել հետևյալ հիմնական տվյալները.

- բեռի կշիռը՝ Q_F , կգ,
- աշխատանքային օդային բացակի մեծությունը՝ δ , մ,
- սնման անվանական լարումը՝ $U_{սն}$, Վ,
- աշխատանքային շրջապատի առավելագույն ջերմաստիճանը՝ $t_{աշխ}$, $^{\circ}C$,
- մագնիսալարի նյութի մակնիշը:

Էլեկտրամագնիսական ձգող $P_{էլ}$ ուժի արժեքը կարելի է որոշել Մաքսվելի բանաձևով.

$$P_{էլ}=B\delta'^2S_q/2\mu_0, \quad (1)$$

որտեղ $\mu_0=4\pi 10^{-7} \text{ Հն/մ}$ օդի բացարձակ մագնիսական թափանցելիությունն է, S_q -ն՝ աշխատանքային բացակի գումարային մակերեսը՝ $S_q=S_1+S_2=2S_1$, $B\delta'$ -ը՝ մագնիսական դաշտի ինդուկցիայի նախնական արժեքը δ -ում: $B\delta'$ -ի արժեքը հաշվարկվում է $B\delta'=(0,4\dots 0,6)Bs$ արտահայտությամբ, որտեղ Bs -ը էլակետային տվյալներում տրված մագնիսալարի նյութի $B(H)$ կորից համապատասխան հազեցման ինդուկցիայի արժեքն է կամ որոշվում է $\mu(B)$ գրաֆիկից՝ μ -ի առավելագույն արժեքին համա-

պատասխանող ինդուկցիայի արժեքով: $B(H)$ և $\mu(B)$ գրաֆիկները, էլեկտրատեխնիկական տարբեր պողպատների դեպքերում, տրվում են համապատասխան տեղեկագրերում:

(1)-ից որոշվում է ներքին բևեռի r_1 շառավղի մոտավոր արժեքը, որտեղ $P_{\text{էլ}} \approx 9,8 k_F Q_F$, k_F -ն պաշարի գործակիցն է ըստ բեռի:

Որոշվում են աշխատանքային օդային բացակի գումարային մագնիսական դիմադրությունը, մագնիսական հոսքը և F_δ ՄՇՈՒ-ն: F_δ -ն կազմում է ԿՓ-ով ստեղծվող $F_{\text{աշխ}}$ աշխատանքային ՄՇՈՒ-ի զգալի մասը: Յրման մագնիսական հոսքերին և մագնիսալարում ու բեռում մագնիսական կորուստներին բաժին ընկնող համապատասխանաբար F_σ' և $F_{\text{պող}}'$ ՄՇՈՒ-ների մոտավոր նախնական արժեքները գնահատվում են համապատասխանաբար k_σ և $k_{\text{պող}}$ գործակիցների միջոցով՝ որպես բազային մեծություն ընդունելով F_δ ՄՇՈՒ-ն.

$$F_\sigma' = (k_\sigma - 1)F_\delta, F_{\text{պող}}' = (k_{\text{պող}} - 1)F_\delta: \quad (2)$$

Մագնիսալարում և բեռում մագնիսական կորուստները գնահատելիս հաշվի է առնվում նաև բեռի (պողպատ) նյութը, եթե այն հայտնի է, հակառակ դեպքում ընդունվում է ՀՎԷ-ի մագնիսալարինը:

Հաշվի առնելով սնման լարման հնարավոր ցածրացումը և այլ գործոններ՝ որոշվում է $F_{\text{աշխ}}$ ՄՇՈՒ-ի մաս կազմող պաշարի $F_{\text{պաշ}}$ ՄՇՈՒ-ի չափը.

$$F_{\text{պաշ}} = (k_{\text{պաշ}} - 1)F_\delta: \quad (3)$$

Այսպիսով, ստացվում է՝

$$F_{\text{աշխ}}' = F_\delta + F_\sigma' + F_{\text{պող}}' + F_{\text{պաշ}}: \quad (4)$$

Օգտվելով ջերմային բալանսի հավասարումից՝ հաշվարկվում են ԿՓ-ի ℓ_Φ երկարությունը, h_Φ բարձրությունը, պատուհանի $\ell_{\text{պ}}$ երկարությունը, $h_{\text{պ}}$ բարձրությունը՝ հաշվի առնելով ԿՓ-ի կարկասի $\Delta_{\text{կ}}$ հաստությունը և տեղադրման համար օդային $\Delta_{\text{օդ}}$ տարածությունը: Հաշվարկվում են էլեկտրամագնիսի r_2 և r_3 շառավղիները և a , b , c չափսերը (նկ. 1):

Հիմք ընդունելով ՀՎԷ-ի չափսերը և $k_{\text{պաշ}}$ գործակիցը՝ ճշգրտվում են B_δ -ի, F_σ -ի, $F_{\text{պող}}$ -ի և $F_{\text{աշխ}}$ -ի արժեքները:

Հիմք ընդունելով $F_{\text{աշխ}}$ ՄՇՈՒ-ի արժեքը՝ հաշվարկվում է ԿՓ-ի պղնձե հաղորդալարի $d_{\text{պղ}}$ տրամագծի նախնական արժեքը՝ ըստ ստանդարտ արտադրանքի ճշգրտելով գալարների w քանակը, R_Φ դիմադրությունը, I_Φ հոսանքը, հոսանքի J_Φ խտությունը, փաթույթի P_Φ հզորությունը, $Q_{\text{պղ}}$ պղնձի, մագնիսալարի $Q_{\text{պ}}$ պողպատի և ՀՎԷ-ի ընդհանուր $Q_{\text{էլ}}$ կշիռները:

Հաշվողական տեխնիկայի զարգացումը լայն հնարավորություններ է ստեղծում էլեկտրամագնիսի ավտոմատ նախագծման և պարամետրերի լավարկման մեթոդների գործնական կիրառման համար, որն ապահովում է նախագծման գործընթացների զգալի կրճատում և կատարելագործում:

Հիմք ընդունելով ՀՎԷ-ի հաշվարկի և նախագծման մաթեմատիկական ապարատը՝ մշակվել է ավտոմատացված նախագծման համակարգ (ԱՆՀ)՝ համապատասխան համակարգչային ծրագրով, որը հնարավորություն է տալիս նախագծողի հետ երկխոսության ռեժիմում իրականացնել սարքի նախագծում լավարկված պարամետրերով՝ ստանալով անհրաժեշտ ընթացիկ և վերջնական տեղեկություն թվային արժեքների տեսքով [1, 2]:

ՀՎԷ-ի ավտոմատացված նախագծման համակարգի ծրագրային փաթեթը, բաղկացած երկու ենթահամակարգից՝ աշխատանքային և լավարկման, կազմվել է C# ծրագրային լեզվով: Ծրագրային ինտերֆեյսը բաղկացած է պատուհանից, որտեղ կատարվում են էլակետային նախնական տվյալների ներմուծումը, ընտրովի մեծությունների արժեքների սահմանումը, հաշվարկային արժեքների գնահատումը և գրանցումը:

Նախագծողն աշխատանքի ժամանակ հնարավորություն ունի մասնակցելու նախագծման գործընթացին՝ ընտրելով այն մեծությունների արժեքները, որոնք ընկած են որոշակի միջակայքում: Նա նաև ստուգում է պարամետրերի արժեքների ազդեցությունը էլեկտրամագնիսի հաշվարկվող պարամետրերի վրա և համապատասխան վճիռ կայացնում: Այսինքն, նախագծողն անմիջականորեն ազդում է հաշվարկի վերջնական արդյունքների վրա՝ ելնելով իր մասնագիտական գիտելիքներից ու փորձից, և հնարավորություն է ունենում նախագծման ընթացքում «խոսել» համակարգչի հետ, հաշվարկի ընթացքում համեմատել ու վերլուծել ստացված արժեքները:

ՀՎԷ-ի ավտոմատացված նախագծման ընթացքում, համաձայն նախնական էլակետային տվյալների, լուծվել են հետևյալ խնդիրները.

1. էլեկտրամագնիսի, ԿՓ-ի պատուհանի և տեղադրման պատուհանի չափերի և աշխատանքային $F_{աշխ}$ ՄՇՈՒ-ի արժեքի որոշումը,
2. ԿՓ-ի հաղորդալարի տրամագծի, գալարների քանակի, դիմադրության, հոսանքի, հոսանքի խտության, հզորության և քաշի որոշումը,
3. էլեկտրամագնիսի մագնիսալարի և գումարային քաշի որոշումը:

ԱՆՀ-ում վերոհիշյալ բոլոր խնդիրները լուծվում են փոխհամաձայնեցված, անհրաժեշտության դեպքում՝ հաշվարկված արժեքների ճշգրտման հնարավորությամբ:

ՀՎԷ-ի հաշվարկի և նախագծման գործընթացում կառավարվող պարամետրեր կարող են հանդիսանալ ԿՓ-ի պատուհանի k_{ϕ} գործակիցը՝ $k_{\phi} = h_{\phi} / \ell_{\phi}$,

որով պայմանավորվում են h_{Φ} բարձրությունը, ℓ_{Φ} երկարությունը, մագնիսալարի r_2 և r_3 շառավիղները և պղնձե հաղորդալարի $d_{պղ}$ տրամագիծը, որոնց թվային արժեքները կարող են լավարկվել:

Որպես սահմանափակող մեծություններ հանդիսանում են F_{σ} , $F_{պող}$ ՄՇՈՒ-ների մեծությունները, որոնց ճշգրտված արժեքները, համեմատած նախնականի հետ, չպետք է գերազանցեն համապատասխանաբար հարաբերական ε_1 և ε_2 որոշակի մեծությունները, $F_{աշխ}$ ՄՇՈՒ-ի հարաբերական մեծությունը նախնականի համեմատ պետք է գտնվի որոշակի $\varepsilon_3 \dots \varepsilon_4$ միջակայքում, իսկ Ψ -ում հաշվարկային հոսանքի $J_{\Phi, հաշվ}$ խտության արժեքը չպետք է գերազանցի $J_{\Phi, թույլ}$ թույլատելի սահմանային արժեքը, որով պայմանավորված է փաթույթի գերտաքացման արժեքը:

Արդյունավետության չափանիշներն արտահայտող նպատակային ֆունկցիաներ կարող են հանդիսանալ՝ Ψ -ի աշխատանքային P_{Φ} հզորությունը, պղնձի $Q_{պղ}$ քաշը, մագնիսալարի Q_{Ψ} քաշը, էլեկտրամագնիսի $Q_{\text{էլ}}$ քաշը, մագնիսալարի եզրաչափերից որևէ մեկը (օրինակ, r_3 շառավիղը) և այլն:

Այսպիսով, ՀՎԷ-ի լավարկման խնդիրը ձևակերպվում է հետևյալ կերպ. k_{Φ} գործակցի կամ $d_{պղ}$ -ի արժեքի այնպիսի փոփոխություն, որի դեպքում էլեկտրամագնիսի արդյունավետության չափանիշներն արտահայտող նպատակային ֆունկցիան կամ ֆունկցիաները կարող են բավարարել առաջադրված պահանջը, օրինակ, $Q_{պղ}$ -ն, Q_{Ψ} -ը կամ P_{Φ} -ն լինեն նվազագույն:

ՀՎԷ-ի հաշվարկի և լավարկման խնդրի մաթեմատիկական մոդելն ունի հետևյալ տեսքը՝

$$\begin{aligned} \bar{X} &= (d_{պղ}, k_{\Phi}), \\ 0 &\leq F_{\sigma}'(\bar{X}) - F_{\sigma}(\bar{X}) / F_{\sigma}'(\bar{X}) \leq \varepsilon_1, \\ 0 &\leq F_{պող}'(\bar{X}) - F_{պող}(\bar{X}) / F_{պող}'(\bar{X}) \leq \varepsilon_2, \\ -\varepsilon_3 &\leq F_{աշխ}(\bar{X}) - F_{աշխ}'(\bar{X}) / F_{աշխ}(\bar{X}) \leq \varepsilon_4, \\ J_{\Phi, հաշվ}(\bar{X}) &\leq J_{\Phi, \text{թույլ}}, \\ Q_{պղ}(\bar{X}) &\rightarrow \min, \\ Q_{\Psi}(\bar{X}) &\rightarrow \min, \\ Q_{\text{էլ}}(\bar{X}) &\rightarrow \min, \\ P_{\Phi}(\bar{X}) &\rightarrow \min: \end{aligned} \tag{5}$$

Համառոտ նկարագրենք ԱՆՀ-ի փաթեթի աշխատանքը: “Էլեկտրամագնիս”.exe ֆայլը թողարկելիս համակարգչի էկրանին բացվում է պատուհան, որի վերին

մասից՝ “Էլակետային տվյալներ” բաժնում կատարվում է էլակետային տվյալների ներմուծում (նկ. 2):

Նկ. 2. ՀՎԷ-ի ակտոմատ նախագծման համակարգի պատուհանը

“Ընտրվող մեծություններ” բաժնում նախագծողի կողմից կատարվում է հետևյալ պարամետրերի համապատասխան միջակայքերից արժեքների որոշակիացում: Այդ պարամետրներն են. $k_p=1,0\dots1,05$, $k_{պող}=1,05\dots1,1$, $k_{պաշ}=1,2\dots1,5$, $k_{\sigma}=1,1\dots1,4$, $k_{\psi}=1,5\dots3$, $\Delta_{\sigma\eta}=0,5\dots5$ մմ, $\Delta_{\psi}=1\dots5$ մմ, սահմանափակող մեծությունները՝ $\varepsilon_1=0,1\dots0,4$, $\varepsilon_2=0,1\dots0,4$, $\varepsilon_3=0,02\dots0,1$, $\varepsilon_4=0,05\dots0,2$: Ելնելով էլեկտրամագնիսի մագնիսալարի նյութի տեսակից և օգտվելով տեղեկագրքից՝ ներմուծվում է B_s -ի արժեքը:

Էկրանի ներքևում գտնվող “Սկսել” կոճակը սեղմելուց հետո “Ընտրվող մեծություններ” բաժնի $H_{պող}$ պատուհանում ներմուծվում է B_s -ին համապատասխան $H_{պող}$ -ի արժեքը՝ օգտվելով տեղեկագրքից: B_s -ի արժեքը հայտնվում է պատուհանի ներքևի “Հաշվարկային տվյալներ” բաժնում (նկ. 2-ում c-ի արժեքը ներկայացված չէ՝ պատուհանի լայնության սահմանափակության պատճառով): “Հաշվել” կոճակը սեղմելուց հետո արտաձևման “Հաշվարկային տվյալներ” բաժնում մեկ տողով դուրս են բերվում հաշվարկվող ելքային պարամետրերի մեծությունները: Նախատեսված որևէ պայմանի չբավարարվելու դեպքում էկրանին բացվող լրացուցիչ պատուհանում (նկ. 2-ում այն բացակայում է) տրվում է մեկնաբանություն պատճառի մասին, որին համապատասխան՝ նախագծողը “Ընտրվող մեծություններ” բաժնում կատարում է անհրաժեշտ պարամետրի փոփոխություն:

Նախագծողը հնարավորություն ունի “Ընտրվող մեծություններ” բաժնում փոփոխելու նշված մեծությունների արժեքները տրված միջակայքում և միաժամանակ հետևելու ՀՎԷ-ի պարամետրերի փոփոխություններին: Նման մոտեցման շնորհիվ նախագծողը բավականին կարճ ժամանակահատվածում կարողանում է ստանալ էլեկտրամագնիսի նախագծային տարբերակներ:

Լավարկման համար սեղմվում է էկրանի ներքևում գտնվող “Լավարկում” կոճակը և “Ընտրվող մեծություններ” բաժնում նախագծողի կողմից կատարվում է լավարկման պարամետրի մուտքագրում: Օրինակ, ըստ $d_{պղ}$ -ի՝ լավարկման դեպքում “Ընտրվող մեծություններ” բաժնի $d_{պղ}$ պատուհանում մուտքագրվում է նոր արժեք, իսկ ըստ k_{ϕ} -ի՝ լավարկման դեպքում փոխում է k_{ϕ} պատուհանում մուտքագրված արժեքը, և սեղմելով “Հաշվել” կոճակը՝ ներքևի տողում ներկայացվում են նոր տարբերակի հաշվարկային արդյունքները: Նախագծողը հնարավորություն ունի ստացված արդյունքները համեմատել, վերլուծել և համապատասխան եզրակացություն կատարել:

Նախագծման գործընթացն ավարտվում է ներքևի աջ կողմում գտնվող «Փակել» կոճակը սեղմելով:

Հետազոտության արդյունքներ: ՀՎԷ-ի հաշվարկի և նախագծման համար ելակետային հիմնական տվյալների թվային արժեքներ են հանդիսացել $Q_F=200 կգ$, $\delta=10^{-3} մ$, $U_{սն}=24 Վ$, $\theta_{աշխ}=40^\circ C$, մագնիսալարի նյութի մակնիշը՝ էլեկտրատեխնիկական սառը գլանված 3413 մակնիշի պողպատ ($B_s=2 S$), $J_{\phi\theta n_{լլ}}=5 Ա/մմ^2$, իսկ ընտրվող մեծություններն ունեցել են հետևյալ արժեքները՝ $k_P=1,02$, $k_{\phi}=2$, $\Delta_{ոդ}=0,5 մմ$, $\Delta_{կ}=0,5 մմ$, $k_{\sigma}=1,2$, $k_{պող}=1,06$, $k_{պ}=1,2$, $\varepsilon_1=0,1$, $\varepsilon_2=0,1$, $\varepsilon_3=0,05$, $\varepsilon_4=0,15$: Աշխատանքային հաշվարկի արդյունքում ստացվել են հետևյալ ելքային տվյալները. $r_1=28,2 մմ$, $r_2=121,5 մմ$, $r_3=124,7 մմ$, $h_{\phi}=58 մմ$, $\ell_{\phi}=29 մմ$, $a=3,2 մմ$, $b=14,1 մմ$, $d_{պղ}=1,2 մմ$, $w=1471$, $R_{\phi}=14,6 Օմ$, $I_{\phi}=1,64 Ա$, $J_{\phi}=1,45 Ա/մմ^2$, $P_{\phi}=39,5 Վտ$, $Q_{պղ}=6,96 կգ$, $Q_{պ}=3,65 կգ$, $Q_{էլ}=10,62 կգ$: Ստացված արդյունքները հետագա տարբերակների համար հանդիսացել են բազային: Ծավալի սահմանափակության պատճառով պատուհանը չի ներկայացվում:

ՀՎԷ-ի հաշվարկային պարամետրերի լավարկման խնդիրը ձևակերպվել է հետևյալ կերպ.

1. Ապահովել ԿՓ-ի հաղորդալարի $d_{պղ}$ տրամագծի այնպիսի արժեք, որը դիսկրետ արժեքներ ունեցող փոփոխական է, որի դեպքում $Q_{պղ}$ -ն և P_{ϕ} -ն նվազագույն են:

Խնդրի լուծման համար կիրառվել են լրիվ ընտրանքների և կոորդինատային վայրէջքի եղանակները, որոնց մեքենայական իրականացումներն ընդգրկվել են ԱՆՀ-ում [3]:

2. Ապահովել ԿՓ-ի k_{ϕ} գործակցի և $d_{պղ}$ -ի այնպիսի արժեքներ, որոնց դեպքում $Q_{պղ}$ -ն, Q_{ϕ} -ն, $Q_{էլ}$ -ը և P_{ϕ} -ն կլինեն նվազագույն:

Երկու խնդրի դեպքում անփոփոխ են մնացել ՀՎԷ-ի էլակետային հիմնական, ընտրվող և սահմանափակող տվյալները:

Առաջին խնդրի դեպքում $d_{պղ}=1,2$ մմ-ից մեծացումից նպատակային ֆունկցիաների արժեքներն աճել են: Նպատակային ֆունկցիաների արժեքները դարձել են նվազագույն $d_{պղ}=1,12$ մմ դեպքում. $w=1648$, $I_{փ}=1,27$ Ա, $J_{փ}=1,29$ Ա/մմ², $P_{փ}=30,68$ Վտ, $Q_{պղ}=6,8$ կգ, $Q_{ս}=3,65$ կգ, $Q_{է}=10,45$ կգ²: Այսինքն՝ $Q_{պղ}$ -ն փոքրացել է մոտ 2,3%, $Q_{է}$ -ը՝ մոտ 1,7%, իսկ $P_{փ}$ -ն՝ մոտ 22%:

Երկրորդ խնդրի դեպքում (նկ. 2) նպատակային ֆունկցիաների արժեքների լավագույն նվազումը ստացվել է $k_{փ}=1,8$ դեպքում. $d_{պղ}=1,16$ մմ, $w=1502$, $I_{փ}=1,57$ Ա, $J_{փ}=1,48$ Ա/մմ², $P_{փ}=37,7$ Վտ, $Q_{պղ}=6,37$ կգ, $Q_{ս}=3,43$ կգ, $Q_{է}=9,8$ կգ: Այսինքն, $P_{փ}$, $Q_{պղ}$, $Q_{ս}$ և $Q_{է}$ պարամետրերը փոքրացել են համապատասխանաբար 4,5%-ով, 8,5%-ով, 6%-ով և 7,7%-ով:

Նպատակային ֆունկցիաների արժեքների ավելի լավացում է ստացվել $d_{պղ}=1,12$ մմ դեպքում. $w=1591$, $I_{փ}=1,38$ Ա, $J_{փ}=1,40$ Ա/մմ², $P_{փ}=33,17$ Վտ, $Q_{պղ}=6,28$ կգ, $Q_{ս}=3,43$ կգ, $Q_{է}=9,71$ կգ: Այսինքն, $P_{փ}$, $Q_{պղ}$, $Q_{ս}$ և $Q_{է}$ պարամետրերը բազային համեմատ փոքրացել են համապատասխանաբար 16%-ով, 10%-ով, 6%-ով և 8,5%-ով:

Եզրակացություն: Մշակված ԱՆՀ-ն (բաղկացած աշխատանքային և լավարկային նախագծման ենթահամակարգերից) ապահովում է կիրառման անհրաժեշտ մատչելիություն ու հարմարավետություն և կարող է կիրառվել ՀՎԷ-երի համակարգերի նախագծման գիտական և ուսումնական գործընթացներում՝ ապահովելով վերջնական անհրաժեշտ տեղեկություն՝ թվային արժեքների տեսքով:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ՀԱՊՀ «Էլեկտրամագնիսական համակարգեր» և «Ավտոմատացված համակարգերի և մոդելավորման» բազային գիտահետազոտական լաբորատորիաներին տրամադրված ֆինանսավորման շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Оганесян А.Т.** Система автоматизированного проектирования герконовых реле с оптимальными параметрами // Известия вузов. Электромеханика.- 2011.-Т. 2.- С. 53-55.
2. **Գրիգորյան Ա.Խ., Ավետիսյան Ա.Գ., Շահբազյան Ս.Ս., Ապետյան Ն.Վ.** Էլեկտրամագնիսական կախոցի ավտոմատացված նախագծման համակարգ // ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագիր. Տեխն. գիտ. սերիա.- 2016.- Հատ. LXXIX, № 3.- էջ 315-325:
3. **Թերզյան Հ.Ա.** Ավտոմատացված նախագծման համակարգերի տեսություն.- Երևան, Լոս-Անջելոս, Աթենք, 1995.- 433 էջ:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 29.03.2017:

**А.Т. ОГАНЕСЯН, Г.М. МИНАСЯН, Т.Р. МЕЛКОНЯН, К.Р. ЕНОКЯН,
А.А. ОГАНЕСЯН**

**АВТОМАТИЗИРОВАННАЯ СИСТЕМА ПРОЕКТИРОВАНИЯ ПЛОСКОГО
ПОДЪЕМНОГО ЭЛЕКТРОМАГНИТА**

Разработана автоматизированная система проектирования плоского подъемного электромагнита, состоящая из двух подсистем - рабочей и оптимальной. Система позволяет в диалоговом режиме реализовать проектирование электромагнита с оптимальными параметрами и получить необходимую информацию в виде числовых значений.

Ключевые слова: плоскоподъемный электромагнит, обмотка управления, автоматизированное проектирование, диалоговый режим, оптимизация.

**A.T. HOVHANNISYAN, G.M. MINASYAN, T.R. MELKONYAN,
K.R. YENOQYAN, A.A. HOVHANNISYAN**

AN AUTOMATED DESIGN SYSTEM OF A FLAT LIFTING ELECTROMAGNET

An automated system for designing a flat lifting electromagnet, consisting of two subsystems - working and optimal has been developed. The system allows, in an interactive mode, to realize the design of an electromagnet with optimal parameters and to obtain the necessary information in the form of numerical values.

Keywords: flat lifting electromagnet, control winding, automated design, interactive mode, optimization.

Ե.Ա. ՄԱՆԱՍՅԱՆ

**ԲԺՇԿԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ
ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄԸ**

Մշակվել է բժշկական որոշումների կայացմանն աջակցող ցանցային ավտոմատացված համակարգ: Համակարգը թույլ է տալիս ուղղորդել բժիշկներին որոշումները կայացնելիս, այսինքն՝ ախտորոշելու, հետազոտությունների խումբը որոշելու և բուժման կուրս նշանակելու ժամանակ: Այն կատարում է խորհրդատուի դեր: Ավտոմատացված համակարգն ուսուցանվում է բժիշկ մասնագետների օգնությամբ, այնուհետև դառնում է ինքնաուսուցվող: Հնարավոր է ավելացնել նոր տվյալներ, որոնց հիման վրա համակարգը կինքնաուսուցանվի: Այն փորձարարական ստուգում է անցել դիաբետ հիվանդության տվյալներով:

Առանցքային բառեր. բժշկական որոշումների կայացմանն աջակցող համակարգ, ինքնաուսուցանվող համակարգեր, IBM Watson, Apache Spark:

Ներածություն: Ժամանակակից աշխարհում առողջապահության ոլորտում բժշկագիտության զարգացումը շատ արագ է տեղի ունենում: Արդյունքում՝ բժշկական պրակտիկայում ի հայտ են գալիս դեպքեր, երբ հիվանդներն ստանում են ոչ արդիական բուժօգնություն, սխալ դեղամիջոցներ կամ տեղի են ունենում բժշկական ոլորտի այլ սխալներ: Բժշկական որոշումների կայացմանն աջակցող համակարգի (Clinical Decision Support System կամ CDSS) կիրառման դեպքում նման սխալները կնվազեն, իսկ բժիշկները, կապված կոնկրետ կլինիկական դեպքերի հետ, կարող են ստանալ բժշկական արդի տեղեկատվություն, որը կհանգեցնի նրանց գիտելիքների արդիականացմանը [1]:

Բժշկությունն անցում է կատարում ապացուցահենք բժշկության, ինչն ենթադրում է միանշանակ, կշռադատված և պատճառաբանված բուժում՝ կիրառելով անհատի համար ժամանակակից լավագույն բուժումը, իսկ այդ բուժման իրավասիւթությունն արդի բժշկությամբ պետք է ապացուցելի լինի [2]: Ապացուցահենք բժշկությունը միավորում է տարիների ընթացքում կուտակված բժշկական լավագույն փորձը և գիտության ժամանակակից նվաճումները: CDSS-ները կարող են նպաստել բժիշկների կողմից ամենաարդյունավետ ապացուցահենք բժշկական որոշումներ կայացնելու հարցում:

Ժամանակակից բժշկության մեջ տեղի են ունենում ստանդարտացման գործընթացներ, որի հետևանքով ի հայտ է եկել կլինիկական պրակտիկայի ուղենիշը (clinical practice guideline կամ CPG) [3]: CPG-ի կիրառման դեպքում բժիշկները

պարտավոր են բժշկական որոշումներ կայացնել՝ չշեղվելով նման բժշկական դեպքին համապատասխանող ուղենիշից: CPG-ն նաև էժանացնում է բուժման գործընթացը [3]: Սրա շնորհիվ պարզեցվում է ախտորոշման ավտոմատացումը: Սակայն ոչ բոլոր բուժհիմնարկներն են սկսել օգտագործել CPG: CDSS-ի ներդրումն էականորեն կհեշտացնի այդ անցումը և կկրճատի բուժաշխատողների վերապատրաստման համար անհրաժեշտ ծախսերը:

CDSS-երի տիպերը: CDSS-երի օտագործումը ժամանակակից բժշկության պահանջներից է [4,5]: CDSS-երը լինում են 2 տիպի.

1. գիտելիքահենք [6],
2. ոչ գիտելիքահենք [7]:

Գիտելիքահենք CDSS-երը ներկայացնում են նախապես մտածված և ծրագրավորված գործողությունների հաջորդականություն: Այս տիպի CDSS-երը նախատեսված են առօրյա և ֆիքսված քայլերով բժշկական պրոցեդուրաներին նպաստելու համար և օգտագործում են ֆիքսված տվյալների խումբ [6]: Բժշկական նոր հայտնագործությունների ավելացումն այս համակարգում ժամանակատար և ծախսատար է, որոշ դեպքերում անգամ տնտեսապես ոչ նպատակային, քանի որ համակարգում պետք է կատարվի կողի փոփոխություն [6]:

Ոչ գիտելիքահենք CDSS-երում օգտագործվում են բոլոր տիպի բժշկական տվյալները՝ հիվանդության պատմությունը, ախտորոշումները, բուժումները, հիվանդների տարբեր կենսաբանական տվյալները, բժշկական գրականությունը և այլն [7]: Այս համակարգերը, համեմատած առաջինի հետ, շատ ավելի ճկուն են, ունակ են «սովորելու» մուտքագրված տվյալների միջոցով [7]: Ոչ գիտելիքահենք համակարգերում օգտագործվում է մեքենայական ուսուցումը, քանի որ անհրաժեշտ է բժշկական տվյալներից ավտոմատացված ձևով հայտնաբերել կապեր այդ տվյալների տարբեր մասերի միջև, ստանալ որոշակի արդյունքներ տվյալների պարունակության մասին կամ կատարել կոնկրետ խնդրի համար պիտանի եզրակացություններ [8, 9]:

Առողջապահական կազմակերպություններն սկսել են օգտագործել CDSS-եր, ինչն օգնում է բժիշկներին՝ կատարելու հիվանդի վիճակի մասին բժշկական գնահատումներ տարբեր չափանիշներով, կամ տրամադրում է օգնություն՝ բժշկական որոշումներ կայացնելիս [4]: Գոյություն ունեցող ոչ գիտելիքահենք CDSS-երն արդյունավետ են առկա բժշկական տվյալների դեպքում, որոնց մեծ մասը պահպանվում է տեքստի ձևով [10]: Սակայն այս տիպի CDSS-երում օգտագործվում է մեքենայական ուսուցում, այդ պատճառով բժշկական որոշումների աջակցությունները չեն հիմնավորվում, այլ տրամադրվում է վերջնական արդյունքը, և բժիշկներին անհայտ է մնում, թե ինչու է հենց այդ արդյունքը ստացվել, և ինչ հիմքեր այն ունի [10]:

Խնդրի դրվածքը: Արդիական է մշակել հեռահաղորդակցական ցանցով աշխատող ավտոմատացված ոչ գիտելիքահենք CDSS, որը կունենա հետևյալ հնարավորությունները.

1. տեքստային տվյալների մուտք,
2. տեքստային որոնման միջոցով բժշկական որոշումների կայացման աջակցություն,
3. տրամադրված բժշկական որոշումների աջակցությունների տեքստային պատճառաբանում:

Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է.

1. համեմատել ոչ գիտելիքահենք CDSS-երում կիրառելի տեխնոլոգիաները,
2. մշակել համակարգը,
3. կատարել թեստավորում՝ բժիշկ-մասնագետների մասնակցությամբ:

Համակարգի ստեղծման անհրաժեշտ տեխնոլոգիաները: Քանի որ բժշկական տվյալների մեծ մասը տեքստային են, և խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է կիրառել մեքենայական ուսուցում, հետևաբար, պետք է դիտարկել մեքենայական ուսուցում տրամադրող առկա լուծումները կամ, եթե դրանք չեն բավարարում, ստեղծել նորը: IBM Watson-ն ունի Retrieve and Rank ծառայություն, որի միջոցով կարելի է տեքստային տվյալները մուտքագրել համակարգ, կատարել տեքստային որոնում և որոնման արդյունքները գնահատել [8]: Դրա շնորհիվ IBM Watson-ի Retrieve and Rank ծառայության տրամադրված արդյունքների ճշտությունը մեծանում է, տրամադրվում են արդյունքներ, որոնք իմաստային առումով ամենամոտեն են որոնվող տեքստին: IBM Watson-ի Retrieve and Rank ծառայությունը տալիս է որոնման բավականին մեծ ճշտություն, կիրառելի է տեքստային տվյալների դեպքում, մուտքագրված մեծ տեքստից այս ծառայությունն առանձնացնում է մի փոքր հատված, որն ամենալավն է նկարագրում որոնման արդյունքը, և դրան զուգահեռ ավելի մեծ տեքստ, որից հայտնաբերվել է որոնման արդյունքը, հետևաբար՝ IBM Watson-ի Retrieve and Rank ծառայության այս մոտեցումը հարմար է կիրառել նշված խնդիրը լուծելու համար:


IBM Watson-ն ունի նաև Document Conversion ծառայություն, որի միջոցով docx, pdf և html ընդլայնելով՝ ֆայլերից կարելի է ստանալ տեքստ: Հետևաբար՝ կուտակված ամբողջ բժշկական թվայնացված տեքստային տվյալները հնարավոր կլինի կիրառել:

Տեքստի միջից կապեր հայտնաբերելու և գիտելիք ստանալու համար անհրաժեշտ է կատարել բնական լեզվի մշակում (Natural language processing կամ NLP) [11]: Գոյություն ունեն NLP-ի պատրաստի գրադարաններ և տեխնոլոգիաներ, կատարվել է դրանց համակողմանի ուսումնասիրություն: Ընտրվել է Apache Spark MLlib-ը, քանի որ այն անվճար է, բաց կոդով և լավ նկարագրված [12]:

Խնդիրը լուծելու համար կարելի է նախ տեքստային որոնում կատարել IBM Watson-ի Retrieve and Rank ծառայության միջոցով, այնուհետև ստացված արդյունքների վրա կիրառել NLP՝ Apache Spark MLlib-ով, վերջնական պատասխանի ճշտությունը մեծացնելու համար:

Շատ կարևոր է նաև, որ ընտրված 2 միջոցներով հնարավոր լինի աշխատել ծրագրավորման նույն լեզվով: Ե՛վ IBM Watson-ով, և՛ Apache Spark-ով կարելի է աշխատել Java ծրագրավորման լեզվով, հետևաբար՝ միջանկյալ օղակը, որի միջոցով պետք է կապ հաստատել այս 2 միջոցների միջև և որը պետք է մշակվի սույն աշխատանքը մշակելիս, պետք է գրված լինի Java ծրագրավորման լեզվով:

Մշակված CDSS-ը և դրա ճարտարապետությունը: Մշակվել է ոչ գիտելիքահենք CDSS: Համակարգով աշխատանքը պարզ դարձնելու համար Java ծրագրավորման լեզվով ստեղծվել է վեբ կիրառում վեբ ինտերֆեյսով, որից օգտվելու համար անհրաժեշտ է մուտք գործել համակարգ վեբ դիտարկչի միջոցով: Մշակված CDSS-ը օգտագործում է IBM Watson ծառայությունը և Apache Spark գործիքամիջոցը: Ստեղծված համակարգի ճարտարապետությունը սխեմատիկորեն պատկերված է նկ.1-ում:



Նկ. 1. Մշակված CDSS-ի ընդհանուր ճարտարապետությունը

Համակարգի այս 3 մասերն իրար հետ կապ են հաստատում հեռահաղորդակցական ցանցով: Վեբ դիտարկիչը վեբ կիրառման, վեբ կիրառումը IBM Watson ծառայության և Apache Spark գործիքամիջոցի հետ կապ են հաստատում HTTP հաղորդակարգի միջոցով: Աշխատանքի բաշխման, արագագործության մեծացման և առկա հսկայածավալ բժշկական տվյալները մշակելու համար Apache Spark-ը տեղադրված է մի քանի փոխհամագործակցող քումփյութերների վրա, որոնց միջև կապը ևս իրականացված է հեռահաղորդակցական ցանցով HTTP հաղորդակարգով, քանի որ այդ քումփյութերները, կախված դրանց տնտեսական շահավետության և տրամադրվող ծառայությունների առանձնահատկություններից,

կարող են գտնվել աշխարհագրական տարբեր կետերում, այդ թվում՝ նաև տարբեր աշխարհամասերում:

Նախքան համակարգը օգտագործման հանձնելը՝ պետք է մուտքագրել որոշակի խումբ բժշկական արդի գրականություն: Վեբ դիտարկիչով կարելի է համակարգ մուտքագրել docx, pdf կամ html ընդլայնմամբ ֆայլեր: Մուտքագրումից հետո HTTP արձանագրությամբ այդ ֆայլերը փոխանցվում են Վեբ կիրառմանը, ինչը իր հերթին HTTP հաղորդակարգով դրանք փոխանցում է IBM Watson-ի Document Conversion ծառայությանը: IBM Watson-ի Document Conversion ծառայությունը փոխարկում է փոխանցված ֆայլը JSON-ի և վերադարձնում Վեբ կիրառմանը: Այդ JSON մասնավորապես պարունակում է answer_units դաշտը, որը ներկայացնում է JSON-ների զանգված: Այդ զանգվածը ստացվում է IBM Watson-ի Document Conversion ծառայությանը փոխանցված ֆայլում պահվող տեքստը տրամաբանական մասերի բաժանելու շնորհիվ: Մասնավորապես՝ տեքստի նման բաժանումը կատարվում է ըստ գլուխների, ենթագլուխների և այլն: Աղ. 1-ում ներկայացված է answer_units-ի մեկ տարրի դաշտերի մի մասը: Աղ. 1-ում ներկայացված parent_id-ն ծնող տեքստի իդենտիֆիկատորն է, օրինակ՝ ենթագլխի parent_id-ն այդ գլխի id-ն է:

Աղյուսակ 1

IBM Watson-ի Document Conversion ծառայության տրամադրվող պատասխան դաշտերի նկարագրությունը

Դաշտի անունը	Տիպը	Նշանակությունը	Օրինակ
id	UUID	Մեկ գրառման իդենտիֆիկատորը	2592bbf5-3d58-4137-822c-eb5de0f57783
parent_id	UUID	Ծնող գրառման իդենտիֆիկատորը	2592bbf5-3d58-4137-822c-eb5de0f57783
title	String	Գրառնամ վերնագիրը	Chapter 1. Diabet
text			Diabetes mellitus (DM), commonly referred to as diabetes, is a group of...

Վեբ կիրառումը, IBM Watson-ի Document Conversion ծառայությունից JSON ստանալուց հետո, ստեղծում է աղ. 1-ում ներկայացված դաշտերով գրառումների զանգված, և այդ զանգվածը HTTP հաղորդակարգի միջոցով փոխանցվում է IBM Watson Retrieve and Rank ծառայությանը՝ պահպանման և հետագայում օգտագործման համար:

Համակարգում բժշկական գրականություն ավելացնելուց հետո անհրաժեշտ է կատարել բժիշկ մասնագետներին համակարգի «ուսուցանում»: Համակարգը ուսուցանվում է վեբ կիրառման միջոցով տրամադրվող վեբ ինտերֆեյսով: «Ուսուց-

ման» ընթացքում բժիշկները պետք է կատարեն տարբեր բժշկական որոշումների հետ կապված տարբեր հարցերի որոնումներ: Որոնման կոճակը սեղմելուց հետո HTTP հաղորդակարգով վեբ ինտերֆեյսը կապ է հաստատում վեբ կիրառման հետ, որից հետո վեբ կիրառումը իր հերթին դիմում է IBM Watson-ի Retrieve and Rank ծառայությանը: IBM Watson-ի Retrieve and Rank ծառայությունը կատարում է ավելացված բժշկական գրականությունից ստացված տվյալներում որոնում Apache Solr գործիքամիջոցով և վերադարձնում 10 պատասխան: Այդ 10 պատասխանները հետ են փոխանցվում վեբ ինտերֆեյս: Բժիշկ մասնագետները պետք է ստացված 10 պատասխանները գնահատեն 4 բալային համակարգով և սեղմեն «հաստատում» կոճակը: Դրանից հետո այդ գնահատականները նույն եղանակով փոխանցվում են IBM Watson-ի Retrieve and Rank ծառայությանը: IBM Watson-ի Retrieve and Rank ծառայությունը այդ գնահատականների հիման վրա սկսում է ուսուցանվել: Համակարգ կարելի է նոր բժշկական գրականությունը մուտքագրել և բժիշկ մասնագետների կողմից նոր որոնումներ ու գնահատումներ կատարել համակարգի աշխատանքի ամբողջ ընթացքում, այդ թվում՝ նաև համակարգը շահագործման հանձնելուց հետո: Դրանց թվի մեծացման հետ մեծանում է համակարգի կողմից տրամադրվող պատասխանների ճշտությունը:


Համակարգի «ուսուցանումից» հետո այն կարելի է հանձնել շահագործման: Վեբ դիտարկչի միջոցով կարելի է համակարգում կատարել բժշկական որոշման որոնում, որի արդյունքում ստեղծվում է HTTP հարցում և ցանցով ուղարկվում վեբ կիրառմանը: Վեբ կիրառումը կատարում է նախապես «ուսուցանված» IBM Watson Retrieve and Rank ծառայությանը հարցում՝ փոխանցելով որոնվող տեքստը: IBM Watson-ի Retrieve and Rank ծառայությունը վերադարձնում է ամենահավանական 10 արդյունքները վեբ կիրառմանը, և վեբ կիրառումը ցանցով HTTP հաղորդակարգով կապ է հաստատում Apache Spark-ի գլխավոր սերվերի հետ և փոխանցում այդ 10 արդյունքները: Դրանք մշակվում են Apache Spark-ով՝ կիրառելով Apache Spark-ի MLlib հնարավորությունը, և վերադարձվում է այդ արդյունքներից առավել հավանական տարբերակը, որը վեբ կիրառումը վերադարձնում է վեբ դիտարկչին: Վերադարձված արդյունքը համարվում են բժշկական որոշման աջակցություն: Բժիշկները հնարավորություն են ունենում տեսնել որոնմանը համապատասխանող առաջարկը և այդ առաջարկը փաստարկող տեքստը համապատասխան բժշկական գրականությունից: Բժիշկներն իրենց հերթին կարող են գնահատել տրամադրված արդյունքը, ինչը փոխանցվում է IBM Watson-ի Retrieve and Rank ծառայությանը, որի շնորհիվ ամեն անգամ կատարվող որոնումների արդյունքները լավարկվում են:

Համակարգի փորձնական ստուգման արդյունքները: Ստեղծված համակարգի արդյունավետության մակարդակն ստուգելու համար անհրաժեշտ է այն

կիրառել իրական բժշկական տվյալների որոշակի խմբի վրա, ուսուցանել համակարգը բժիշկ-փորձագետների օգնությամբ, կատարել տեքստային որոնում՝ կապված հիվանդության կամ ախտանիշների հետ, և գնահատել ստացված արդյունքները բժիշկ-մասնագետների կողմից:

Կատարվել են համակարգի փորձնական թողարկում և գնահատում դիպետ հիվանդության տվյալներով: Կատարվել են բժշկական 10 որոշմանն առնչվող հարցերի որոնում և տրամադրված արդյունքների գնահատում:

Կատարված տեքստային որոնումների արդյունքների գնահատականները ներկայացված են նկ. 2-ում:



Նկ. 2. Համակարգի փորձարարական ստուգման արդյունքները

Յուրաքանչյուր առանձին որոնման արդյունք գնահատվել է 100 բալային համակարգով, արդյունքները գրանցվել և փոխանցվել են IBM Watson-ին: Նույն հարցումը կատարվել է 3 ձևով միևնույն տվյալների առկայության պայմաններում.

1. տեքստային որոնում Apache Solr որոնման համակարգի միջոցով,
2. տեքստային որոնում IBM Watson-ի Retrieve and Rank ծառայության կիրառմամբ,
3. տեքստային որոնում IBM Watson-ի Retrieve and Rank ծառայության և Apache Spark համակարգերի համատեղ կիրառությամբ:

IBM Watson-ի Retrieve and Rank ծառայության և Apache Spark համակարգերի համատեղ կիրառությամբ որոնումների տեքստի, ստացված պատասխանի և բացատրության 2 օրինակ ներկայացված է աղ. 2-ում:

Բժշկական որոշումների օրնակները, դրանց պատասխաններն ու բացատրությունը

Հարց	Պատասխան	Բացատրություն
What are the main signs of type 1 diabetes mellitus?	• Frequent urination • Increased thirst • Extreme hunger	Many advances have been made since the Diabetes Control and Complications Trial (DCCT)...
Type 2 diet and preparats	Glycemic Control With Diet, Sulfonylurea, Metformin, or Insulin in Patients With Type 2 Diabetes Mellitus	Treatment with diet alone, insulin, sulfonylurea, or metformin is known to improve glycemia in patients with type 2 diabetes mellitus

Նկ. 2-ը ցույց է տալիս, որ 3-րդ տիպի փորձարկման արդյունքներն ունեն մեծ ճշտություն, և նման տիպի համակարգը կարող է կիրառելի լինել որպես դիաբետի CDSS: Ստեղծված համակարգը մինչ որպես դիաբետի CDSS տրամադրելը՝ անհարժեշտ է կատարել երկարատև և տվյալների ավելի մեծ խմբով փորձարկում:

Եզրակացություն: Մշակվել է հեռահաղորդակցական ցանցով աշխատող ավտոմատացված ոչ գիտելիքահենք CDSS: Ներկայացվել է ստեղծված համակարգի ճարտարապետության սխեման, հիմնավորվել է տեխնոլոգիաների ընտրությունը, կատարվել են ստեղծված համակարգի փորձնական գործարկում և գնահատում: Համաձայն համակարգի նախնական փորձարկման գնահատականի՝ ստեղծված համակարգն արդյունավետ է և կիրառելի:

Ներկայացված համակարգն ունի հետևյալ առավելությունները.

- տեքստային տվյալների մուտքի հնարավորություն,
- տեքստային տվյալների որոնման հնարավորություն,
- ժամանակի ընթացքում տրամադրվող արդյունքների բարելավում,
- տրամադրված բժշկական աջակցության տեքստային բացատրություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Falan S., Han B.** Relationships, Caring, and Near Misses: Michael's Story // Transactions of the International Conference on Health Information Technology Advancement. – 2013.- Vol. 2, No. 1, ISSN: 2168-6335.- P. 53-60.
2. **Masic I., Miokovic M., Muhamedagic B.** Evidence Based Medicine – New Approaches and Challenges // Acta Inform Med. – 2008.- Vol. 16, No. 4, PMID: PMC3789163.- P. 219–225.
3. **Hayward R.S.** Clinical practice guidelines on trial // CMAJ. – 1997.- Vol. 156, No. 12.- P. 1725-1727.

4. **Kawamoto K., Balas E.A., Lobach D.F.** Improving clinical practice using clinical decision support systems: a systematic review of trials to identify features critical to success // *BMJ*. – 2005, 38398.500764.8F.- P. 1-8.
5. **Hunt D.L., Haynes R.B., Hanna S.E., Smith K.** Effects of computer-based clinical decision support systems on physician performance and patient outcomes: a systematic review // *JAMA*. – 1998, jama.280.15.1339. – P. 1339–1346.
6. **Miller R.A.** Medical diagnostic decision support systems—past, present, and future: a threaded bibliography and brief commentary // *J. Am Med Inform Assoc.* – 1994.- Vol. 1, issue 1. ISSN 1067-5027. – P. 8-27.
7. **Berlin A., Sorani M., Sim I.** A taxonomic description of computer-based clinical decision support systems // *J. Biomed Inform.* – 2006.- Vol. 39, issue 6.- P. 656-667.
8. **High R.** The Era of Cognitive Systems: An Inside Look at IBM Watson and How it Works // *Redbooks*. – 2012. – P. 14.
9. **Feldman R., Sanger J.** The Text Mining Handbook: Advanced Approaches in Analyzing Unstructured Data // Cambridge University Press. – 2007. - P. 410.
10. **Berner E.S.** Clinical Decision Support Systems Theory and Practice // *Health Informatics (Springer)*. – 2007. – P. 269.
11. **Chowdhury G.G.** Natural language processing // *Annual Review of Information Science and Technology*. – 2003.- Vol. 37, issue 1. - P. 51-89.
12. **MLlib: Machine Learning in Apache Spark / X. Meng, J. Bradley, B. Yavuz, E. Sparks, et al.** - *Journal of Machine Learning Research*. – 2016. -Vol. 17, issue 34. – P. 1-7.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 29.03.2017:

Е.А. МАНАСЯН

РАЗРАБОТКА АВТОМАТИЗИРОВАННОЙ СЕТЕВОЙ СИСТЕМЫ ДЛЯ ПОДДЕРЖКИ ПРИНЯТИЯ КЛИНИЧЕСКИХ РЕШЕНИЙ

Исследована и разработана сетевая система для поддержки принятия клинических решений. Автоматизированная система предоставляет помощь врачам во время клинического процесса принятия решений, т.е. решений группы диагностики, лечения и исследований. Сетевая автоматизированная система обучает с помощью врачей-специалистов, а затем становится самообучаемой, т.е. позволяет добавлять новые данные, на основе которых она будет самообучаться. Проведена экспериментальная проверка на основе данных заболевания диабетом.

Ключевые слова: система для поддержки принятия клинических решений, самообучаемая система, IBM Watson, Apache Spark.

Y.A. MANASYAN

**DEVELOPING AN AUTOMATED NETWORK SYSTEM FOR SUPPORTING THE
CLINICAL DECISION-MAKING**

A network system for clinical decision-making is investigated and developed. This system helps the doctor in the clinical decision-making process, *i.e.* diagnosis, treatment and research group decisions. This automated system is taught by medical specialists, then becomes a self-learning system, allowing to add new data based on which the system will be self-learning. It has been tested by the data on diabetes.

Keywords: clinical decision support system, self-learning system, IBM Watson, Apache Spark.

Գ.Տ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Ա.Կ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

**FPGA-Ի ՄԻՋՈՑՈՎ ՍՈՂՈՒԼՅԱՐ ԲԱԶՄԱՊԱՏԿԻՉՆԵՐԻ ՄԻՆԹԵԶՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Դիտարկված են արագագործության տեսակետից արդյունավետ մնացորդային դասերի համակարգում տարբեր սկզբունքներով նախագծված մոդուլյար բազմապատկիչների սինթեզման արդյունքները ծրագրավորվող տրամաբանական ինտեգրալ սխեմաների (FPGA-Field-Programmable Gate Array) միջոցով, և կատարված է այդ սինթեզումների համեմատական վերլուծությունը FPGA-ռեսուրսների օգտագործման և սարքերի արագագործության տեսակետից:

Առանցքային բառեր. մոդուլյար բազմապատկիչներ, մոդուլային բազմապատկման RTL նկարագրում, FPGA-ռեսուրսներ, FPGA-սեկցիաներ, LUT-աղյուսակներ:

Ներածություն. Թվային սարքերին ներկայացվող արագագործության բարձրացման պահանջների տեսակետից մնացորդային դասերի համակարգը (մոդուլային թվաբանությունը) դիտարկվում է որպես արդյունավետ միջոց: Մնացորդային դասերի համակարգի օգտագործումը թույլ է տալիս էականորեն բարձրացնել թվաբանական հաշվարկների արագությունը՝ մնացորդներով գործողությունների զուգահեռ կատարման շնորհիվ [1]:

Չնայած նրան, որ մոդուլային թվաբանության բնագավառում կատարվել են բավական թվով տեսական հետազոտություններ, սակայն այս ուղղությունը լայն զարգացում չի ստացել՝ այդ սարքերն իրականացնող տարրային բազայի բացակայության պատճառով: Ինտեգրալային սխեմատեխնիկայի զարգացման հետ մեկտեղ հնարավորություններ ստեղծվեցին մոդուլային թվաբանության բլոկում նմանատիպ սարքերի իրագործման համար:

Աշխատանքի արդյունավետությունը. Արդյունավետության բարձրացման համար ունենալով զուգահեռացման հնարավորություն՝ մոդուլյար հաշվարկների կատարումը պահանջում է մոդուլյար կարգերում թվաբանական գործողությունների կատարման հատուկ սխեմաների մշակում: Մնացորդային դասերի համակարգում հաշվարկների առանձնահատկությունների և առավելությունների ուսումնասիրումը, ինչպես նաև դրանց հիմնական արդյունքների կիրառումը հեռանկարային ուղղություն է: Կարևոր է նշել, որ մոդուլյար թվաբանության օգտագործման մասնագիտացված բարդ ֆունկցիոնալ բլոկների առկայությունը կընդլայնի

մոդուլյար թվաբանության կիրառման ոլորտները (օրինակ՝ ինֆորմացիայի գաղտնագրում, թվային և թվաբանական հսկում և արատորոշում և այլն):

Նախագծման ընթացքում սարքերի կառուցվածքի, կիրառվող տեխնոլոգիաների ընտրությունը հաճախ կատարվում է՝ հիմնվելով նախագծողի անձնական փորձի վրա: Սարքերի իրագործումն անհրաժեշտ է իրականացնել այնպես, որ հնարավորինս խնամքով օգտագործվեն FPGA-երի ռեսուրսները:

Այսպիսով, ձևավորվում է պահանջարկ. կատարել FPGA-ի միջոցով իրագործված մոդուլյար բազմապատկիչների սինթեզման արդյունքների վերլուծություն և տարբեր եղանակներով (սկզբունքներով) իրականացված սխեմաների արդյունավետության գնահատում FPGA ռեսուրսների օգտագործման և արագագործության տեսակետից: Այդ նպատակով առանձին հետազոտվել են մոդուլյար թվաբանության բլոկի մշակված բոլոր տեսակների մոդուլյար բազմապատկիչները Spartan - 3E FPGA-ի օգտագործմամբ իրագործելիս՝ կախված մոդուլի արժեքի մեծությունից, մուտքային թվերի (օպերանդների) կարգայնությունից: Սարքերի սինթեզումը կատարվել է Xilinx Synthesis Technology ISE 14.0 փաթեթի միջոցով, վերլուծությունները և գնահատումը կատարվել են FPGA-րի ռեսուրսների LUT (Look-up-Table) - աղյուսակների, Slices - սեկցիաների, մուտք-ելքերի) օգտագործման տեսանկյունից:

Մնացորդային դասերի համակարգում բազմապատկման սարքերի նախագծումը կարելի է իրականացնել տարբեր սկզբունքներով՝ հիշող սարքերի և ժամանակակից ինտեգրալ սխեմաների օգտագործմամբ՝ հիմնված մոդուլային թվաբանության հայտնի օրենքների և բազմապատկման գործողության կատարման ալգորիթմների վրա [2-4]: Մասնավորապես, դիտարկված են հետևյալ սկզբունքներով իրագործված մոդուլյար բազմապատկիչների FPGA-ի վրա սինթեզման արդյունքները.

առաջին սկզբունքով՝ $(axb) \bmod m$ մոդուլյար բազմապատկում PROM (Programmable Read-Only-Memory) տիպի հիշող սարքի միջոցով,

երկրորդ սկզբունքով՝ $(axb) \bmod m$ մոդուլյար բազմապատկում ինդեքսային (կամ դիսկրետ-լոգարիթմական) մեթոդով,

երրորդ սկզբունքով՝ $(axb) \bmod m$ մոդուլյար բազմապատկում՝ քառակուսիների օրենքով,

չորրորդ սկզբունքով՝ $(axb) \bmod m$ հաշվարկի $m=2^k$ մոդուլով մոդուլյար բազմապատկում,

հինգերորդ սկզբունքով՝ $(axb) \bmod m$ հաշվարկը Բուտի ալգորիթմի կիրառմամբ (Radix 8):

Բոլոր եղանակներով մշակված սարքերի համար կատարվել է սինթեզում ISE Design ավտոմատ նախագծման համակարգով, և սինթեզման արդյունքների

վերլուծությունները՝ Spartan-3E ընտանիքի FPGA-ի օգտագործմամբ: Գնահատումները կատարվում են ոչ միայն ապարատային ծախսերի, այլ նաև արագագործության տեսանկյունից: Սարքերի սինթեզման համար ընտրվել է սինխրոնազանչանի գեներացման ժամանակը 5 նվ (Verilog նկարագրումը՝ always #5 clk=~clk): Արագագործությունը գնահատվել է սինթեզվող սարքի աշխատանքի սիմուլյացիայի ժամանակ, որն իրականացվել է ModelSim (Mentor Graphics) փաթեթի միջոցով:

Որպես օրինակ դիտարկենք երկրորդ և չորրորդ սկզբունքներով նախագծված մոդուլյար բազմապատկիչների սինթեզման արդյունքները, որը տրամադրվում է ISE Design նախագծման XST համակարգից հաշվետվության տեսքով (Report)՝ FPGA-ի ռեսուրսների օգտագործման և արագագործության տեսանկյունից:

Աղ. 1-ում ներկայացված է $(axb) \bmod m$ հաշվարկը՝ $m=2^k$ մոդուլյար բազմապատկիչների սինթեզման հաշվետվությունը. a և b թվերի $n=8$, $n=16$, $n=32$ և $n=64$ կարգայնության և m մոդուլի արժեքը $[0: 255]$ միջակայքում (այսինքն՝ m -ը 8 կարգանի է):

Աղյուսակ 1

$m=2^k$ մոդուլով մոդուլյար բազմապատկիչների սինթեզման հաշվետվությունը

		Սարքերի օգտագործման հաշվետվությունը				
N	Օգտագործված	n=8	n=16	n=32	n=64	
N	տրամաբանությունը	Used	Used	Used	Used	Ընդ.
1	4 մուտքանի LUT (Look-up-Table)-ի քանակը	53	94	121	216	9312
2	Օգտագործ. սեկցիաների (Slices) քանակը	32	48	72	132	4656
3	Սեկցիաներում օգտագործված տրիգերների քանակը	52	88	106	159	9312
4	Օգտագործ.մուտք/ելքերի (IOBs -input/output blocks) քանակը	16	52	80	142	190
5	Արագագործությունը	5k/40նվ	5k/80նվ	5k/160նվ	5k/320նվ	

Որպես օգտագործված տրամաբանություն(FPGA ռեսուրսներ) դիտարկված են.

- 4 մուտքանի LUT-աղյուսակների ընդհանուր քանակը Spartan-3E FPGA-ում 9312 հատ է, $n=8$ կարգանի a և b թվերի բազմապատկման սարքի սինթեզման դեպքում օգտագործվում է 53 հատ, 1%-ը, $n=16$ դեպքում՝ 96 հատ, ընդհանուրի 1%-ը, և $n=32$ դեպքում՝ 121 հատ, ինչը նույնպես կազմում է ընդհանուրի 2%-ը և այլն:
- Օգտագործված սեկցիաների ընդհանուր քանակը Spartan-3E FPGA-ում 9312 հատ է, $n=8$ կարգանի a և b թվերի բազմապատկման սարքի

սինթեզման դեպքում՝ 32 հատ, ինչը կազմում է ընդհանուրի 2%-ը, $n=16$ դեպքում՝ 48 հատ, ընդհանուրի 1%-ը, և $n=32$ դեպքում՝ 72 հատ, ընդհանուրի 2%-ը և այլն:

- Սեկցիաներում առկա տրիգերների ընդհանուր քանակը Spartan-3E FPGA-ում 4656 հատ է, $n=8$ կարգանի a և b թվերի բազմապատկման սարքի սինթեզման դեպքում՝ 52 հատ, ինչը կազմում է ընդհանուրի 1%-ը, $n=16$ դեպքում՝ 88 հատ, ընդհանուրի 1%-ը, և $n=32$ դեպքում՝ 108 հատ, ընդհանուրի 1%-ը և այլն:
- Օգտագործված մուտք/ելքերի ընդհանուր քանակը Spartan-3E FPGA-ում 190 հատ է, $n=8$ կարգանի a և b թվերի բազմապատկման սարքի սինթեզման դեպքում՝ 24 հատ, ինչը կազմում է ընդհանուրի 6%-ը, $n=16$ դեպքում՝ 48 հատ, ընդհանուրի 26%-ը, և $n=32$ դեպքում՝ 80 հատ, ընդհանուրի 45%-ը և այլն:
- Օգտագործված սինքրոնիզացիայի ընդհանուր քանակը Spartan-3E FPGA-ում 190 հատ է, $n=8$ կարգանի a և b թվերի գումարման սարքի սինթեզման դեպքում՝ 24 հատ, ինչը կազմում է ընդհանուրի 6%-ը, $n=16$ դեպքում՝ 48 հատ, ընդհանուրի 26%-ը, և $n=32$ դեպքում՝ 80 հատ, ընդհանուրի 45%-ը և այլն:

Աղյուսակից երևում է նաև, որ կախված a և b թվերի կարգայնությունից և k կարգաթվից՝ սարքի արագագործությունը փոփոխվում է 40 նվ-ից մինչև 320 նվ:

Աղ. 2-ում ներկայացված է $(axb) \bmod m$ ինդեքսային (կամ դիսկրետ-լոգարիթմական) մեթոդով իրականացված մոդուլյար բազմապատկիչների սինթեզման հաշվետվությունը. a և b թվերի $n=8$, $n=16$, $n=32$ և $n=64$ կարգայնության և m մոդուլի արժեքը [256:1023] միջակայքում (այսինքն m -ը 10 կարգանի է):

Աղյուսակ 2

Ինդեքսային մեթոդով իրականացված մոդուլյար բազմապատկիչների սինթեզման հաշվետվությունը

NN	Օգտագործված տրամաբանությունը	Սարքերի օգտագործման հաշվետվությունը				
		$n=8$	$n=16$	$n=32$	$n=64$	Ընդ.
		Used	Used	Used	Used	Ընդ.
1	4 մուտքանի LUT (Look-up-Table)-ի քանակը	64	86	162	242	9312
2	Օգտագործ. սեկցիաների (Slices) քանակը	34	42	83	173	4656
3	Սեկցիաներում օգտագործված տրիգերների քանակը	52	92	139	196	9312
4	Օգտագործ.մուտք/ելքերի (IOBs - input/output blocks) քանակը	24	28	32	155	190
5	Արագագործությունը	115 նվ	115 նվ	115 նվ	115 նվ	


Մեկնաբանելով աղ. 2-ում ներկայացված ինդեքսային մեթոդով իրականացված մոդուլյար բազմապատկիչների սինթեզման արդյունքները՝ FPGA-ի ռեսուրսներների օգտագործման տեսակետից առանձնացվում են.

- 4 մուտքանի LUT-աղյուսակները. $n=8$ կարգանի a և b թվերի բազմապատկման սարքի սինթեզման դեպքում օգտագործվում է 64 հատ, $n=16$ դեպքում՝ 86 հատ, և $n=32$ դեպքում՝ 162 հատ, ինչը կազմում է ընդհանուրի 2%-ը և այլն:
- Օգտագործված սեկցիաները $n=8$ կարգանի a և b թվերի բազմապատկման սարքի սինթեզման դեպքում 34 հատ են, $n=16$ դեպքում՝ 42 հատ, և $n=32$ դեպքում՝ 83 հատ, ինչը կազմում է ընդհանուրի 1%-ը և այլն:
- Սեկցիաներում առկա տրիգերներից $n=8$ կարգանի a և b թվերի բազմապատկման սարքի ինթեզման դեպքում օգտագործվում է 52 հատ, $n=16$ դեպքում՝ 92 հատ, և $n=32$ դեպքում՝ 139 հատ, ինչը կազմում է ընդհանուրի 2%-ը և այլն:
- Օգտագործված մուտք/ելքերը $n=8$ կարգանի a և b թվերի բազմապատկման սարքի սինթեզման դեպքում 24 հատ են, $n=16$ դեպքում՝ 28 հատ, և $n=32$ դեպքում՝ 42 հատ, ինչը կազմում է ընդհանուրի 22%-ը և այլն:

Ինչպես երևում է աղ. 2-ից, կախված a և b թվերի կարգայնությունից՝ ինդեքսային մեթոդով իրականացված մոդուլյար բազմապատկիչների արագագործությունը անփոփոխ է՝ 115 նս/:


Այդ արդյունքները ընդհանրացված տեսքով կարելի է ներկայացնել նաև կախվածությունների գրաֆիկներով, որոնցում ներկայացված են FPGA ընդհանրացված ռեսուրսների քանակի կախվածությունը օպերանդների կարգայնությունից ($n=8$, $n=16$, $n=32$ և $n=64$): Նկ. 1-ում առանձին դիտարկված է m մոդուլի արժեքը $[0:255]$ միջակայքում, իսկ նկ. 2-ում բերված է m մոդուլի արժեքը $[256:1023]$ միջակայքում:

FPGA –ի
ռեսուրս.




Նկ. 1. FPGA ընդհանրացված ռեսուրսների քանակի կախվածությունը օպերանդների կարգայնությունից (m -ը մոդուլի արժեքն է $[0:255]$ միջակայքում)

FPGA-ի
ռեսուրս.



Նկ. 2. FPGA ընդհանրացված ռեսուրսների քանակի կախվածությունը օպերանդների կարգայնությունից (m-ը մոդուլի արժեքն է [256:1023] միջակայքում)

Ներկայացնելով տարբեր կարգայնության օպերանդների համար սինթեզման հաշվետվության աղյուսակների արժեքները, ինչպես նաև մոդուլյար բազմապատկիչների նախագծման FPGA-ռեսուրսների և արագագործության կախվածության գրաֆիկի միջոցով կարելի է ստանալ պատկերներ, որոնք ներկայացված են նկ. 3-6 ում:




Նկ. 3. n=8 կարգանի օպերանդներով մոդուլյար բազմապատկիչների նախագծումը


Գրաֆիկներում համադրված են տարբեր եղանակներով իրագործված մոդուլյար բազմապատկիչների FPGA-ի օգտագործված ընդհանուր ռեսուրսները և մշակված սարքերի արագագործությունները: Համադրումը կատարվել է n=8, n=16, n=32 և n=64 բիթ կարգայնությամբ օպերանդների համար:

Համաձայն նկ. 2-ում պատկերված գրաֆիկների՝ առաջին և երկրորդ մեթոդների կիրառումը նպատակահարմար է օպերանդների փոքր կարգայնության


(n=8 և n=16), իսկ երրորդ, չորրորդ և հինգերորդ մեթոդները՝ օպերանդների մեծ (n=32 և n=64) կարգայնության համար:



Նկ. 4. n=16 կարգանի օպերանդներով մոդուլյար բազմապատկիչների նախագծումը



Նկ. 5. n=32 կարգանի օպերանդներով մոդուլյար բազմապատկիչների նախագծումը



Նկ. 6 n=64 կարգանի օպերանդներով մոդուլյար բազմապատկիչների նախագծումը

Գնահատելով սինթեզման արդյունքները՝ կարելի է ընտրել մոդուլյար բազմապատկիչների նախագծման առավել արդյունավետ մեթոդ՝ FPGA-ի ռեսուրսների օգտագործման և այդ սարքի աշխատանքի արագագործության տեսակետից: Առաջարկվում է գնահատումները կատարել հետազոտությունների արդյունքում ձևավորված և փորձնականորեն ստացված բանաձև 1-ի հիման վրա՝

$$G = \sum_{i=0}^5 R_i T, \quad (1)$$

որտեղ G -ն արդյունավետության հայտանիշն է, R_i -ն՝ FPGA-ի օգտագործված բոլոր ռեսուրսները, T -ն՝ սարքի արագագործությունը:

Ինչպես արդեն նշվել է, նախագծված մոդուլյար սարքերի հետազոտումները և արդյունքների գնահատումները կատարվել են ISE Design գործիքամիջոցի կիրառմամբ՝ FPGA-ով սինթեզման համար: Սակայն, նախագծված մոդուլյար բազմապատկիչների համար կատարվել են գնահատումներ ոչ միայն FPGA-ի ռեսուրսների օգտագործման, այլ նաև այդ սարքերի զբաղեցրած մակերեսների տեսակետից:

Բոլոր եղանակներով մշակված մոդուլյար բազմապատկիչները սինթեզվել են նաև Synopsys ընկերության Design Compiler (.dc) ավտոմատացված նախագծման համակարգի միջոցներով:

Սարքերը նկարագրվել են Verilog HDL-ով, ապա նկարագրումները սիմուլյացվել և սինթեզվել են 32 նստանդարտ բջիջների գրադարանի բազիսում, ընտրվել է սինթրոագդանշանի գեներացման ժամանակը՝ 5նվր:

Նախագծված մոդուլյար բազմապատկիչների սինթեզման արդյունքները՝ սարքերի զբաղեցրած մակերեսի և արագագործության տեսակետից ներկայացված են աղ. 3-ում:

Նախագծված մեթոդներով սինթեզված մոդուլյար բազմապատկիչների մակերեսները և արագագործությունները

Նախագծված մոդուլյար բազմապատկիչի եղանակը	Զբաղեցրած մակերեսը, մկմ ²	Արագագործությունը, նվ/ր.
Մոդուլյար բազմապատկում PROM տիպի հիշող սարքի միջոցով	1291.36 (n=32) 1684.56 (n=64)	65 90
Մոդուլյար բազմապատկում ինդեքսային մեթոդով	1734.51 (n=32) 2032.84 (n=64)	80 90
m=2 ^k մոդուլով մոդուլյար բազմապատկում	2284.73 (n=32) 2945.62 (n=64)	105 190
m=2 ^k մոդուլով ինդեքսային բազմապատկում	2649.14 (n=32) 3711.26 (n=64)	105 105
Բուտի ալգորիթմի հիման վրա մոդուլյար բազմապատկում	4511.87 (n=32) 6129.44 (n=64)	185 220

Եզրակացություն. Հետազոտվել են FPGA-ի միջոցով նախագծված մոդուլյար բազմապատկիչների սինթեզման արդյունքները, և հաշվարկվել FPGA-ի օգտագործված ընդհանուր ռեսուրսները տարբեր եղանակներով մշակված սարքերի համար: Գնահատելով սինթեզման արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ կախված մոդուլի արժեքի մեծությունից և թվերի կարգայնությունից՝ FPGA-ի ռեսուրսների օգտագործման տեսակետից.

- առաջին սկզբունքով մոդուլյար բազմապատկիչները նախընտրելի է կառուցել a և b թվերի փոքր ($n < 16$) կարգայնության և մոդուլի արժեքի [0:255] միջակայքի դեպքում,
- երկրորդ սկզբունքով բազմապատկիչները նախընտրելի է կառուցել a և b թվերի մեծ ($n > 16$) կարգայնության և պարզ թիվ m մոդուլի արժեքի [0:255] միջակայքում,
- երրորդ սկզբունքով մոդուլյար բազմապատկիչները նախընտրելի է կառուցել a և b թվերի մեծ ($n > 16$) կարգայնության և $m = 2^k$ մոդուլի արժեքի [256:1023] միջակայքի դեպքում,
- չորրորդ սկզբունքով մոդուլյար բազմապատկիչները նախընտրելի է կառուցել a և b թվերի մեծ ($n > 16$) կարգայնության և m մոդուլի արժեքի [0: 255] միջակայքի դեպքում:

Այսպիսով, կարելի է պնդել, որ հինգերորդ սկզբունքով (Բուտի ալգորիթմի կիրառմամբ) նախագծված մոդուլյար բազմապատկիչները a և b թվերի կարգայնության բոլոր արժեքների համար օգտագործում են FPGA-ի ռեսուրսների առավելագույն քանակը՝ համեմատած նախագծման մյուս սկզբունքների հետ: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ FPGA-երն ունեն սահմանափակ քանակով ներկառուցված տրամաբանություն և անհամեմատ ավելի շատ քանա-

կով տրիգերներ, հետևաբար՝ կառավարող ավտոմատի առկայությունը նույնպես ունի իր առավելությունը: Ինչպես նաև $(axb) \bmod m$ հաշվարկը Բուտի ալգորիթմի կիրառմամբ կարելի է իրականացնել m մոդուլի բոլոր տեսակի արժեքների դեպքում, ինչը և համարվում է այս սկզբունքի առավելությունը:

Գնահատումները կատարվել են նաև սարքերի աշխատանքի արագագործության տեսակետից, և ինչպես երևում է նկ.2-ում պատկերված գրաֆիկներից, առավել արագագործ են PROM հիշող սարքերի միջոցով իրագործված մոդուլյար բազմապատկիչները, սակայն a և b օպերանդների մեծ կարգայնության ($n=64$ բիթ) դեպքում առավելագույնս օգտագործվում են FPGA-ի ռեսուրսները:

Հիմնվելով Synopsys ընկերության Design Compiler (.dc) ավտոմատացված նախագծման համակարգի միջոցներով ստացված արդյունքների վրա, կարելի է արձանագրել, որ մշակված սարքի և՛ զբաղեցրած մակերեսի, և՛ արագագործության տեսակետից նույնպես առավել նպատակահարմար են PROM հիշող սարքերի միջոցով իրագործված մոդուլյար բազմապատկիչները:

Նշենք, որ մոդուլյար բազմապատկիչները կարող են կիրառվել ինչպես մոդուլով հսկում իրականացնող մասնագիտացված սարքերում, այնպես էլ որոշ ալգորիթմներով (RSA գաղտնագրման ալգորիթմ, Դիֆֆի-Հելլմանի գաղտնագրման բանալիների գեներացման ալգորիթմ) գաղտնագրման սարքերի կառուցման դեպքում [5,6]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Акушский И.Я., Юдицкий Д.И.** Машинная арифметика в остаточных классах. – М.: Советское радио, 1968.- 486 с.
2. **Կիրակոսյան Գ.Տ., Սաղաթելյան Ա.Կ.** Մնացորդային դասերի համակարգում ինդեքսային մեթոդով բազմապատկման սարքերի նախագծումը // Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում. Գիտական հոդվածների ժողովածու.-2014.-Մաս 1.-էջ 110-115:
3. **Սաղաթելյան Ա.Կ.** Մնացորդային դասերի համակարգում $m=2^k$ մոդուլով բազմապատկման սարքերի նախագծում // Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Տեղեկագիր. Տեխնիկական գիտությունների սերիա. - 2015.- Հատոր 68, № 1.- էջ 44-50:
4. **Туманян А.К., Сагателян А.К.** Построение схем умножения на основе комбинационных умножителей// Моделирование, Оптимизация, Управление. ISSN 1829-216x: Вестник ГИУА.- 2011.- Выпуск 14, том 1.- С 82-91.
5. **Թումանյան Ա.Կ., Սաղաթելյան Ա.Կ., Քամայան Ա.Գ.** RSA ալգորիթմի ապարատային իրագործումը// Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Լրաբեր. Գիտական և մեթոդական հոդվածների ժողովածու.-Երևան, 2013.- Մաս 1.- էջ 179-185:
6. **Saghatelyan A.K.** The Hardware Implementation of the Cryptographic Key Generation based on Diffie-Hellman algorithm// Proceedings of Engineering Academy of Armenia.- 2013.- V.10, N4.- P. 760-763.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացված է խմբագրություն 02.02.2017:

Г.Т. КИРАКОСЯН, А.К. САГАТЕЛЯН

**ОЦЕНКА И АНАЛИЗ РЕЗУЛЬТАТОВ СИНТЕЗА FPGA
МОДУЛЯРНЫХ УМНОЖИТЕЛЕЙ**

Рассмотрены результаты синтеза FPGA (FPGA-Field-Programmable Gate Array) модулярных умножителей, эффективных с точки зрения быстродействия и спроектированных разными принципами в системе остаточных классов. Произведена сравнительная оценка этих реализаций с точки зрения быстродействия и использования ресурсов FPGA.

Ключевые слова: модулярные умножители, RTL описание модулярных умножителей, ресурсы FPGA, секции FPGA, LUT-таблицы.

G.T. KIRAKOSSIAN, A.K. SAGHATELYAN

**EVALUATION AND ANALYSIS OF THE SYNTHESIS RESULTS OF
MODULAR MULTIPLIERS OF THE FPGA**

The results of modular multiplier synthesis efficient in terms of fast performance designed by different principles in residual classes on FPGA(Field-Programmable Gate Array) are considered. A comparative analysis of these implementations in terms of performance and use of the FPGA resources is carried out.

Keywords: modular multipliers, RTL description of modular multipliers, FPGA-resources, FPGA-sections, LUT tables.

L.A. MARTIROSYAN

THE QUALITY CHARACTERISTICS ESTIMATION METHOD FOR THE NANOSCALE RTL COMPILERS

For STAR Memory System (SMS) network, one of the most important design constraints is area and power consumption. This paper presents the quality characteristics estimation methodology of SMS network infrastructure for the case of FinFET technology. We present the quality characteristics comparative evaluation for the cases of FinFET and MOSFET technologies.

Keywords: area, power consumption, FinFET, RTL compilers, estimation.

Introduction. Nowadays, system-on-chip (SoC) consists of several embedded IP cores. The number of embedded memories in SoC increased dramatically by having enormous influence on the manufacturing yield of entire SoC. To improve the yield of embedded memories test and repair methodology is needed [1]. Built-in-Self-Test solution is preferable for embedded memories test and repair, because it does not require expensive Automatic Test Equipment (ATE) [2]. Synopsys DesignWare Self-Test and Repair (STAR) Memory System is a complete, cost-effective solution for test and repair of repairable and non-repairable embedded memories. Test and repair infrastructure of SMS network is generated via hierarchy of Register Transfer Level (RTL) compilers [3].

Gate count and power consumption have become key design constraints in STAR Memory System (SMS) network design. Traditional gate count and power consumption estimation methodologies which are based on synthesis tools are inefficient for the case of SMS network [4]. In papers [5-7], we presented quick gate count and power consumption estimation methodologies for SMS network, that are based on linear and polynomial interpolation.

For a long while, in SoC embedded memories were used built with conventional planar MOSFET technology. As embedded memories will continue to consume a large part of the SoC area, the scaling of embedded memories density must continue with the scaling trends of logic. It is now almost impossible to build embedded memories with scaling down parameters by using the traditional MOSFET technology without negative consequences. Therefore, FinFET - based memories have been developed to improve embedded memories scalability. FinFET is one of the most promising device technologies for extending Moore's law to 20 nm and beyond [8]. SMS network must be able to test and repair embedded memories built with the FinFET technology.

Technological changes lead to the need to redesign RTL compilers. Consequently, there will be timing, power, area and other characteristics' changes in the infrastructures of the SMS network. Hence, the quality characteristics of RTL compilers must be reconsidered for the case of the FinFET technology.

The paper [9] authors had presented power and area (gate count) analysis of 45 nm and 15 nm technologies. For that purpose, the RTL design of IEEE 754 Single Precision Floating-Point Unit was analyzed for the case of the 45 nm and 15 nm technologies. The experimental results had proven that 15 nm technology suggests 4 times improvement in power consumption and about 30% improvement in the area compared with the 45 nm technology. Gate count numbers remain almost the same for the 45 nm and 15 nm technologies.

According to paper [9], there are significant changes in RTL design characteristics when moving from the 45 nm technology to the 15 nm one. As RTL compilers also generate RTL descriptions, and they are regular and parameterized, in this paper we would like to expose how quality characteristics of the SMS network will change when migrating from MOSFET to FinFET.

1. Planar vs FinFET technology. To understand FinFET architecture we should compare it with the architecture of a planar transistor [10].

MOSFET transistors have been the core of SoC for several decades, and during this time the size of transistors decreased. MOSFET has a single gate that controls the conductive channel. The gate in a planar transistor has not a good electric field control, and there is leakage current between the source and the drain even when the gate is off. Hence, planar transistors suffer from an undesirable short-channel effect that increases the power required by SoC [10].

To solve the short-channel effect problem, different transistor architectures were proposed, among them the FinFET technology is considered one of the best approaches [11].

In FinFET, the transistor conducting channel is wrapped by a thin silicon “fin” that forms the body of the transistor. The effective channel length of the transistor is defined by the thickness of the fin. The gate fully depletes the channel of carriers. This gate structure controls the channel in a better way, reduces short-channel effects and leakage current. The most important parameters of FinFET are its width, height and channel length [10].

The move from the planar to the FinFET technology causes changes in the performance, area, power, cost and yield [12].

Recent research shows that it is possible to gain 30% performance improvement when moving from a 28 nm planar to a 16 nm or a 14 nm FinFET process [12].

There is a significant improvement in power consumption. The leakage power is two times smaller compared with that of the planar technology. Dynamic

power has also come down along with the nominal voltage, however dynamic power is now the bottleneck to achieving lower power [12]. According to paper [9], there is 4 times power improvement when moving from the 45 nm technology to the 15 nm technology.

The area savings also are essential. There is around 35% to 40% savings when moving from the 28 nm planar to the 16 nm FinFET technology [12]. According to paper [9] there is about 30% area saving when moving from the 45 nm technology to the 15 nm technology.

The manufacturing cost is higher compared with the planar technology because of manufacturing complexity related to the FinFET technology [12].

Failure mechanisms in FinFET's are different from those of planar transistors. Therefore, the BIST algorithms for the planar technology will not be effective for FinFETs. To catch FinFET-specific faults new algorithms for memory based solution were developed in the SMS network. These algorithms help to improve overall yield [10].

2. Methodology. In papers [5-7], we presented a quick gate count and power consumption estimation methodology of the SMS network infrastructure for the case of the MOSFET technology.




Fig. 1. The Block diagram of the gate count and power consumption estimation methodology of the SMS network infrastructure for the case of the FinFET technology

According to the information gained after research, the hierarchy of RTL compilers generates parameterized and regular descriptions. These parameters bring structural or functional changes of schemes. Hence, the quality characteristics of the SMS network design are changed. There are functional dependences between the quality characteristics of schemes generated by RTL compilers and input parameters. The experimental results show that the behavior of the SMS network parameters is linear or polynomial. The analytical representations of functions are unknown. Therefore, we developed the quick gate count and power consumption estimation methodologies which are based on approximation.

Our recent research shows that the behavior of the SMS network parameters for the FinFET technology is also linear or polynomial, but there is sufficient reduction in the area and power consumption data. Consequently, the analytical representations of functions for the FinFET technology differ from that of the MOSFET's.

Fig. 1 shows the block diagram of the gate count and power consumption estimation methodology of the SMS network for the FinFET technology.

To estimate the gate count and power consumption of the SMS network for the FinFET technology, we implement the following steps:

- To explore the structure of the parameterized SMS network for the FinFET technology, the parameters that cause drastic variations in the gate count and power consumption of the SMS network are figured out.
- To generate selected instances for each selected parameter, we choose and generate a number of instances.
- To estimate the gate count and power consumption for generated instances with synthesis tools, we estimate the gate count and power consumption data for selected instances of each parameter with synthesis tools.
- To identify the functions that estimate the gate count and power consumption for parameters, the behavior of parameters is considered according to the real gate count and power consumption estimation data.
- To apply linear and polynomial approximation and find the values of uncertain coefficients, we apply linear or polynomial interpolation to get formulae that describe the behavior of parameters.
- To verify the accuracy of the method, we compare the real and estimated gate count, power consumption data. The maximum achieved estimation error must be 10%.

3. SMS network infrastructure for the case of the FinFET technology.

SMS network provides automated test and repair strategy for embedded memories within SoC. SMS has hierarchical structure as shown in Figure 2. It

contains several hardware components, including: STAR Processors, Wrappers, Server, Fuse Box, TAP controller and memories [1] (Fig. 2 [7]).

SMS generates wrappers around each memory. Wrappers work with Processors to test and repair embedded memories. A single wrapper is able to work with several memories [1].

A group of Wrappers connects to a Processor. A single Processor can test and repair several memory instances. The Processor performs all test and repair functions by using memory specific test algorithms. It interacts with memory, finds out the defects, and if the memory is repairable, generates the repair signature.

The repair signature is then transferred to Laser Fuse box, which blows laser fuses corresponding to the defective memories [1].

The processor in turn connects to the Server which generates a top level design of the network and passes the SMS network signals to the JTAG port through the TAP controller.




Fig. 2. A SMS network infrastructure example

